

Իտալիոյ Էլեմուտոփի նախարարութիւնը կը հաղորդէ, որ 25 դրամատուներու մէջ մեծ գումարներ ստեղծուցած է, որոնք շատ հաւանաբար անուղղակի միջոցներով կը պատկանին Ռուսամ Պրն Լատէնի «Քալիտա» ցանցին: Նախարարութիւնը, որ այս գծով ուղղակի կը գործակցի Միացեալ Նահանգներու իշխանութիւններուն հետ, իր տրամադրութեան տակ ունի 11 անհատներու եւ 14 կապակցութիւններու անուններ, որոնց հաշիւները ստեղծուած են ցնոր տնօրինութիւն: Իտալիոյ այս քայլը կը յաջորդէ ՄԱԿի այն տեղեկագիրին (43 էջ), որուն համաձայն՝ «Քալիտա» միջապային դրամատուներու մէջ միլիոնաւոր տոյարներ ունի, որոնք սակայն կը գործածուին տարբեր անուններով:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԳԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆ ՆՇԱՆԱԿԵՑ ԶՕՐ. ԻՍԱՄ ԱԹՈՒԷՆ



Վարչապետ Հարիրի կը նախագահէ ժողովին

Նախարարաց խորհուրդը իր ընթացիկ նիստը գումարեց երէկ, գլխաւորութեամբ վարչապետ Ռաֆիկ Հարիրիի: Տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտի յայտարարեց, որ ժողովը առաւելարար վարչական բնոյթի որոշումներ եւ օրինագիծներ վաւերացուցած է: Ֆաթուայի Տան կողմէ ներքին գործոց նախարարութեան յղուած դիմումին հի-

մամբ լուծուած է Մոնա-մէտ Ամին Միւսթիւնը, իսկ զօր. Իսամ Աթուէ նշանակուած է պաշտպանութեան նախարարութեան վարչական գրասենեակի ընդհանուր տնօրէն: Մնացեալ նշանակումները յետաձգուած են զայլ շաբթուան նիստին, ըսաւ ան:

Արիտի ըսաւ, որ հարաւ մէջ դիմադրութիւնը իր պարտականու-

թիւնը կը կատարէ եւ իսրայէլեան ոստիկանութիւնները նորութիւն մը չեն:

Դիւանագիտական նշանակումներու գծով բաւական յառաջդիմութիւն կատարուած է եւ անոնք մօտ օրէն պիտի կատարուին, յայտնեց Արիտի, հաստատելով, որ անհրաժեշտ է լաւագոյն մակարդակի վրայ պահել արտասահմանի մէջ Լիբանանի դիւանագիտական ներկայութիւնը:

ՀՐԶՊԱԼԼԱ - ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒԺԵՐ ԲԱԽՈՒՄ՝ ՇԸՊԱԱՅԻ ՄԷՋ

Իսրայէլեան հրետանին երէկ առաւօտ քանի մը ուժեր արձակեց Քֆարշուպայի մերձակայ Նաքբար շրջանին ուղղութեամբ: Երեկոյան, Դիմադրութիւնը յայտարարեց, որ իր ուժերը հարուածած են բռնադարձեալ Մագարէ՛ Շըպաայի մէջ գտնուող իսրայէլեան բանակի Սըմաթայի եւ Ռուսայաթ Ալամի դիրքերը:

մը վրայ, իսկ երեկոյան անոր օդանաւերը հասան մինչեւ մայրաքաղաք Պէյրութի վերեւ: Ակնարկելով Հըզպալլայի կողմէ իսրայէլեան ուժերու եւ դիրքերու վրայ կատարուած այս

յարձակումին, Իսրայէլի պաշտպանութեան նախարար Պեհիմաին Պըն Էլիազար զգուշացուց Սուրիան եւ Լիբանանը եւ սպառնաց անոնց, շեշտելով, որ անոնք կրակով կը խաղան:

ԺԱԲ ՇԻՐԱԸ ԿԸ ԲՆԱՂԱՏԷ ՌԻԱԶԻՆԿՈՒՆԸ՝ ԻՐԱՔԻ ԸՆԹԱՅԻՆ

ՈՉ ՄԻԱՅՆ ԱՐԱԲԱԿԱՆ, ԱՅԼԵԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ՝ ԻՐԱՔԻ ԿՈՂՔԻՆ

Իսլամական աշխարհի ղեկավարները միացեալ ճակատով կը շարունակեն ճնշել Ուաշինգթոնի վրայ, որպէսզի հրաժարի իրաքի դէմ յարձակումէ մը, որ պիտի խորացնէ վիճը իսլամներուն եւ Արեւմուտքին միջեւ: Մինչ այդ, Եւրոպայի մէջ Բրիտանիա եւ Պելճիքա

զգուշացուցին իրաքը, որ պէտք է ենթարկուի ՄԱԿի որոշումներուն, այսպէս՝ Ուաշինգթոնի յարձակումին թիրախը պիտի դառնայ: Սակայն Ֆրանսա անմիջապէս հակադրեց: Նախագահ Շիրաք խստիւ քննադատեց ամերիկեան նկատառումները իրաքի նկատմամբ, ըսելով, որ առանց ՄԱԿի լուծումի որոշում տալ: Փաքիստանի ղեկավար Փերուէզ Մուշարրաֆ զգուշացուց իր կողմէ իրաքի դէմ որեւէ յարձակումի որոշում տալ: Գերմանիայի Կանցլեր Ֆրանկ-Բալթարը իրաքի դէմ որեւէ յարձակումի որոշում տալ: Պելճիքայի արտաքին գործոց նախարար Լուի Միշէլ ըսաւ, որ Եւրոպա դժուար թէ մնայ յարձակումը մերժող կեցածքին վրայ, եթէ իրաք մերժէ ՄԱԿի որոշումներուն ենթարկուի: Միշէլ յոյս յայտնեց, որ Ե. Միութեան արտաքին գործոց նախարարները, որոնք այսօր եւ վաղը ժողով պիտի գումարեն Դանիոյ մէջ, քննարկեն իրաքի հարցը:

Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Ժէյ Սթրո ըսաւ, որ գէնքի քննիչներուն վերադարձը առաջին քայլն է միայն: Ան աւելցուց, որ անոնց վերադարձով անդամ կրնայ առկա մնալ զինուորական գործողութեան մը հաւանականու-

թիւնը: Արտաշայտուած այլազան տեսակէտները սակայն որեւէ ձեւով ազդեցութիւն չեն գործէր Միացեալ Նահանգներուն վրայ, որոնք որոշած են Սատտամ Հիւսէյնը տապալել՝ անտեսելով գէնքի քննիչներուն վերադարձի պարագան: Բարձրաստիճան պաշտօնատար մը դիտել տուաւ, որ իրաքի մէջ իշխանութեան փոփոխութիւնը կենսական է եւ ինչ սահմանափակուելի միայն հաւաքական քանդումի գէնքերու հարցով: Պաշտօնատարը աւելցուց, որ Սատտամ Հիւսէյն պէտք է հեռանայ, որովհետեւ ան ահաբեկչութիւն կը հովանաւորէ եւ սպառնալիք է ամբողջ շրջանին հանդէպ:

ԻՐԱԸ ՄԻԱՅՆԱԿԱՆ ԿԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՆԵՐԵՆ

Իրաքի փոխ նախագահ Թահա Եսաին Ռամադան, որ երէկ ավարտեց Սուրիա եւ Եգիպտոս այցելութիւնը, կոչ ուղղեց արաբական պետութիւններուն Պաղատաի կողմէ իրաքի հարցը:

Շար.՝ էջ 10

ՄԻԱՅՆԱԿԱՆ ՆԱԿԱՆԳԻՆ ՄԷՋ

ՄԻՇԻԿԸՆ ՆԱՅԱՆԳԻՆ ՄԷՋ ԱՊՐԻԼ 24Ը ՄՆԱՅՈՒՆ ԶԵԻՈՎ ԿԸ ՀՈՉԱԿՈՒԻ ՀԱՅԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՄԱՆ ՕՐ

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը կը հաղորդէ, որ Միացեալ Նահանգներու Միչիկըն նահանգի կառավարիչ Տոն Էնկլըր ստորագրած է օրինագիծ մը, որ Ապրիլ 24ը մնալուն ձեւով կը հռչակէ «Միչիկընի մէջ Հայկական Ցեղասպանութեան Յիշատակման Օր»:

Նոյն օրինագիծը կը նշէ, թէ իւրաքանչիւր տարի՝ Ապրիլ 24ը նախորդող եւ յաջորդող կիրակիներու միջեւ ժամանակաշրջանը պիտի ըլլայ ոգեկոչման շաբաթ մը, «ի յիշատակ Ցեղասպանութեան զոհերուն, եւ ի պատիւ Ցեղասպանութենէն վերապրողներուն»: Միչիկընի Հայ Դատի Յանձնախումբի ատենապետ Արմէն Տէրաթեան Յանձնախումբին եւ Միչիկընի Հայ Համայնքի անունով շնորհակալական խօսք ուղղեց կառավարիչ Էնկլըրին եւ նահանգի ղեկավարութեան:

Նշեալ օրինագիծը Միչիկընի Օբերակոյտի եւ Ներկայացուցիչներու Տան չորս անդամներու կողմէ հովանաւորուած էր, եւ նահանգի Օբերակոյտին ներկայացուած էր ընդունուած էր 2001ին: Հետագային, օրինագիծը վաւերացուած էր Ներկայացուցիչներու Տան կողմէ, իսկ այս ամսուան սկիզբը ներկայացուած էր կառավարիչին:

Կառավարիչին որոշումին առիթով, օրինագիծի հովանաւորներէն՝ Ցեղասպանական ծորձ Հարթ ըսաւ «Հայկական Ցեղասպանութեան զոհերու եւ անոնց յաջորդներու տառապանքը եւ զոհարեցութիւնը մոռացուած պէտք է մատնուի»:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԿԱԶԱՅԻ ՄԷՋ ՍՊԱՆՆԵՅ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԱՄԲՈՂ ԸՆՏԱՆԻՔ ՄԸ

Պաղեստինեւիսրայէլեան «Կազա - Բեթլեհէմ» համաձայնութիւնը ծանր հարուած մը ստացաւ երէկ, երբ իսրայէլեան ուժեր կազա ներխուժելով սպաննեցին պաղեստինեան ընտանիք մը: Պաշտպանութեան նախարար Պեհիմաին Պըն Էլիազար ցաւ յայտնեց, որ զինուորներ անմեղ պաղեստինցիներ սպաննած են Շէյխ Իժիլին գիւղին դէմ յարձակումին: Համաս իսլամական շարժումը անմիջապէս յայտարարեց, որ պիտի հակադարձէ, լուծելու համար ինկած զոհերուն վրէժը:

Համասի պատասխանատուներէն՝ Մահմուտ Չահար ըսաւ, որ մէկ ընտանիքի չորս անդամներ իսրայէլեան ուժերուն կողմէ սառնարտութեամբ սպաննուած են: Ան աւելցուց, որ երբ պաղեստինցի անմեղ քաղաքայիններ կը սպաննուին, իսրայէլ պէտք է ակընկալէ, որ իր քաղաքացիներն ալ պիտի սպաննուին: Իսրայէլեան զինուորական աղբիւր մը հաղորդեց, որ բնակիչ Շէյխ Իժիլին ներխուժած է, որովհետեւ կասկածելի շարժումներ նկատած է մօտակայ Նեցարիմ հրէական վայրին շուրջ: Ականատեսներ ըսին, որ իսրայէլեան հրասայլեր արեւածագէն առաջ գիւղ ներխուժեցին՝ ալ ու ձախ մերձակոծելով:

Շար.՝ էջ 10

JERMUK

ՋԵՐՄՈՒԿ

ԱՆՍԱԿԱՆ ԶՈՒՐՆ ԸՆՏՈՅ
ԱՐԴԵՆ ՇՈՒԿԱՅԻ ԿՐԱՅ Է

Նոր հասած համալսարանական կազով քարձ ջուրը: Փաստիկ եւ ապակեայ շիշերով: Կրնաք գտնել բոլոր սիւպերմարքեթներուն եւ ցաքրավաճառներուն մօտ: Մեծքաւակի համար դիմել՝ «UNIVERSE» հաստ., Պուրձ Ընտել, Փոլիկարպոս, «Սարդարապատ» շէնք, Արմենիա Պողոտայ կամ ցրուիչ «VAK TRADING COMPANY»-ի: Ծե. 03-626177 եւ 03-773609: Տեք. 961 1 563436 - E-mail: VAK_Trading@hotmail.com

ՃԱՇԱՐԱՆ ՌԻԱՏԻ ԷԼ ՍԱՄԱՐ

(ժուրոյ էլ Պաղոս, Պապիմն դեպի Պրումանայի ձամբուն վրայ)

ԳԵՂԱՏԵՍԻԼ ՎԱՅՐ, ԾԱՌԱՋԱՐԳ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԹՆՈՒՈՐՏ

- Միշտ առատ եւ քարձ աղանդեր, համադրած ձաշեր, սակ մէկ անձի \$8: Խմիչքը՝ ըստ ապաւորանքի:
- Հայկական, արաբական եւ եւրոպական երաժշտութիւն:
- Ամեն Շաբաթ երեկոն յատուկ յայտագիր հանրածանօթ երգիչներու եւ նուագախումբի ընկերակցութեամբ եւ մասնակցութեամբ արաբական պարուի:
- Փոքրերու յատուկ խաղավայր:
- Կը ստանձնենք միութեամբ եւ անձնական խրախմբներ յարմար գիներով:

ՃԱՏՈՒՑ - Յատուկ ձաշացուցակ, 27 տեսակ բաց աղանդեր, բաց խորոված, բաց խմիչք՝ օղի, գարնջուր եւ զովաջուր:

Մէկ անձի համար միայն 17\$: Ընտանայն. 04 - 808707 եւ 03 - 360667:

ԲԱՐԻ ՅԻՇԵՆՔ ՀԱՅՐ ԳԱՐԵԳԻՆԸ

(ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԵՆՓԱՈՒԻ ԾՆՆԳԵԱՆ 70ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՈՎ
ՍԵՍՐՈՂ ԱՐԷ. ԱՃՃԵԱՆԻ ԱՐՏԱՍԱՆԸ ԽՈՍԲԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ՆԻՍՏԻՆ, 23 ՕԳՈՍՏՈՍ 2002ԻՆ, ԵՐԵՒԱՆ)

Գարեգին վեհափառը բարեբախտաբար քանքարաթափոց չեղաւ Դուրեան Սրբազանի մը պէս, եւ կամ ալ ժլատ՝ իր գրութեան մէջ: Բայց ափսոս, որ ճշմարիտ է լատիններէն ասացուածքը

Խօսքը կը թուչի, Գիրը կը մնայ: Եւ այսօր՝ եթէ մենք ալ չենք լսեր մեր ուսուցիչը, մեր դաստիարակը, մենք ունինք, իր կարգ մը դասախօսութիւնները, նկարահանումները, Հայկական Հեռուստատեսիլէն ձայնասփռուած իր պատգամները, իր քաղաքներէն ումանք: Բայց ո՞վ, ո՞վ կրնայ կրկնել իր անպատկերելի ձայնը, շեշտը, ներշնչման գեղեցկութիւնը:

Վաղուան ուսանողը, բարեբախտաբար, իր գրասեղանին վրայ պիտի ունենայ Գարեգին վեհափառի մի քանի կրթական ձեռնարկները:

Քրիստոնէական բարոյագիտութիւն
Տեսական աստուածաբանութիւն
Հովուական աստուածաբանութիւն
Հայ եկեղեցւոյ պատմութիւն
Հայ եկեղեցւոյ պատմութիւն:

Երանի թէ այս բոլորը յատուկ խմբագրութեամբ մը հրատարակուէին, քանի որ, անոնք ոչ միայն օգտակար պիտի հանդիսանային մեր դպրոցականներուն՝ իբրեւ դասագիրք, այլ առհասարակ դաստիարակական եւ ուսուցողական մեծ արժէք ունեցող գիրքեր պիտի ըլլային ընթերցող լայն շրջանակներու համար:

Իբրեւ ուսուցիչ եւ իբրեւ դաստիարակ շատ բան կարելի է ըսել Գարեգին վեհափառի մտատիրապիտ մասին, բայց թերեւս լաւ կ'ըլլայ իր իսկ խօսքերով ներկայացնել իր ըմբռնումը հայ գրեթէ, մտաւորականին եւ հոգեւորականին մասին:

Պայտանուէր ունէր վեհափառը գիրքին հանդէպ: Դպրեկանքի սաներուն ուղղուած իր մէկ գրութեան մէջ ալ կ'ըսէր.

Կը գգա՞ք, սակայն, թէ ինչ կը նշանակէ գրել: Ամէն թուրքի վրայ գրուած ամէն սեւ ձեւ, որքան ալ ըլլայ իր արտաքին գիծերուն մէջ հայ գիր՝ գիր չէ՞, սակայն, մեր ազգային իմացողութեան մէջ, երբ դատարկ է այն հոգիին, որ հայ գիրին ձեւին մէջ մարմնացու առաջին վայրկեանէն իսկ անոր գոյաւորման եւ մնաց կենդանի՝ մարմնին մէջ անկէ սկզբնաւորող շղթային:

Առաջին պայմանը ձեռք գրելուն՝ կ'ուզեմ որ ըլլայ հարգութիւնը մեր անցեալի մեծագործութեան մէջէն բացուող հոգիին: «Զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»... (Գլխաձոր Ա. տարի, 1957թ.):

Վեհափառը իր յատուկ ըմբռնումը ունէր Գարեգին վեհափառի մեծ մտաւորականութեան հանդէպ: Լսեցք իր պատմը.

Մտաւորականութիւնը, ըսուած է, կրկնուած է, բազմիցս հուշակուած է, թէ ազգի մը ուղեղն է, դեկավա ըն է: Մտաւորականութիւնը, իբրեւ աշխարհը, մարդը, կենսքը, արժէքները դիտելու եղանակ, երբեք յատուկ չէ դասակարգի մը: Մտաւորական չէ անպայման այսինչեանը, որովհետեւ այս ինչ դպրոցը աւարտած է կամ այսինչ վկայականը ունի, ոչ: Մտաւորականութիւնը հայեցողութիւն մըն է, ըմբռնողութիւն մըն է կենսքին մէջ: Կարելոր չէ՞ն, պիտի ըսէք, ճարտարագիտական, թեքնոլոգիք ցուանումները. անշուշտ են: Կարելոր չէ՞ն ցուանակալական ցուանումները. անշուշտ են: Բայց արժէքներու ցուանակալական կարգին (hierarchie) մէջ մտաւորականութիւնը ունի իր որոշադրիչ, իրապատուկ եւ անփոխարինելի դերը:

Այս հարցը կը դնեմ այսօր. ո՞վ է մտաւորականը. մտաւորականը ան է, որ իր միտքին մէջ ունի ըմբռնումներ, գաղափարներ, ծանօթութիւններ եւ տեսութիւններ: Մտաւորականը այն է Գարեգին, որ եւ իր աստուածատուր շնորհքը, եւ իր ջանքով ձեռք բերուած հմտութիւնն ու կարողականութիւնը կը դնէ ի սպաս Աստուծոյ, մարդկութեան, ազգին, հայրենիքին, ուրիշներուն: Երբ հանրային տարածքը (dimension) չկայ մտաւորականութեան մէջ՝ այդ մտաւորականութիւնը կը դարձի հարազատութիւն մտաւորականութիւն ըլլալէ: (Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքը Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի Ա. վկայականաց բաշխման հանդիսութեան առթիւ, 5 Յուլիս, 1993 թ. Պէյրութ):

Եւ վերջապէս, ամէն բանէ վեր՝ Գարեգին վեհափառը հոգեւորական էր, ժողովուրդին ծառան: Նայէք թէ առիթով մը ի՞նչ կ'ըսէր.

Մենք հոգեւորական ենք, սա սքեմը ունինք. եւ ժողովուրդը մեզի այդպէս կը նայի. պիտի արժեցնենք գայն. ոչ թէ հովէն եկող, ծովէն եկող տեսակ-տեսակ խօսքերու, նոր նոր ճաշակներու ետեւէն երթանք: Թող իրենք մեզի գան, ոչ թէ մենք իրենց երթանք: Եւ այս է ձեռք կոչումը, որ ըլլաք, մնաք, տեսէք, խորանաք այս ձեռք գիտակ-

ցութեանը մէջ եւ ոչ թէ տերեւի նման երթաք ու գաք, ճիւղին նման տատանիք կամ եղէգին պէս ծոխք: Տոկուն եղէք, տղաք: Երբ այս եկեղեցիին մէջ շարականներ երգէք՝ հիմով-հոտով, ապրումով, հասկացողութեամբ, գեղեցկութեամբ, ժողովուրդը կը հիշատակէ մեր վրայ. երբ քարոզը տաք, մեր հոգիին մէջէն Աստուծոյ խօսքը անցընէք, մեր հայութեան խօսքը բերէք, ժողովուրդը կը հրճուի, կ'ուրախանայ, կը հարբատանայ, եւ ատկա կ'ըլլայ մեր գերագոյն երջանկութիւնը: Երբ գրէք, ու ժողովուրդը մեր գրածը կարդայ ու անկէ բարիք քաղէ, անոր մէջ տեսէք մեր արժանիքը: Երբ կը ծառայէք, պարզ գործերու մէջէն վարչական, կազմակերպական կամ խնամատարական, անոր մէջ գագեք մեր խնդրութիւնը: Այս է իմ հայրական խրատը մեզի:

Դուք բոլորդ ալ գիտէք, որ երբեմն-երբեմն ես մեր եկեղեցւոյ մեծ դեմքերուն գրութիւնները կը կարդամ, անոնցմով կը ներշնչուիմ եւ մեզի ալ բաժնի կը հանեմ իմ այս ընթերցումներէն:

Երեկ գիշեր Դեպի Լոյս եւ Կեանք հատրեմ հատուած մը կարդացի, իմ նախորդներէն Գարեգին Ա. Յովսէփեանց կաթողիկոսին գրած քարոզներէն, որոնցմէ մէկը հետեւեալ վերնագիրը ունի. «Մարդ է որ Գործէ Զերկիր»: Աստուածաշունչի խօսքն է: Մարդն է որ երկիրին մէջ աշխատելով, երկրին, հողին, աշխարհին իմաստ կու տայ (Կաթողիկոսարան Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբնան, «Հաւատարիմ՝ դպրեկանքի կոչումին» 14 Յունիս, 1992թ.):

Եւ փակելու համար այս բաժինը, դարձեալ փոխ կ'առնեմ իր գրիչը, որպէսզի անգամ մը եւս լսենք մեր ուսուցիչը, որ մեզի ցոյց կու տար կենսքի եւ ծառայութեան ճամբան դէպի ժողովուրդը:

Աստուած մարդը ստեղծած է ու իր Որդին ուղարկած է, որ մարդ եղած է, մարդուն համար եւ մարդուն հետ ու մարդուն մէջ: Քրիստոսատիպ ճշմարտութիւնը՝ արժէքը, գաղափարը, վայելքը բաժնե լն է եւ անով հարստանալն է:

Դիտեցէք մեր պատմութիւնը, գագեք մինչեւ Տրդ դար, մեզի նման տղաք, երիտասարդներ գացին մինչեւ եղեսիս, մինչեւ Ալեքսանդրիա, մինչեւ Կ. Պոլիս եւ Աթէնք ու այլ կեդրոններ, հմտութիւն քաղեցին ընդհանուր աշխարհի այդ օրերու բարձրագոյն ոլորտներէն, մտաւորական կենսքի սնունդով անեցան, զօրացան, մեծացան, բայց այնտեղ չ'մնացին. չեղան միայն Պարոյր Հայկազն մը, Աթէնքի մէջ վարչական ու այսօր մեր հպարտութեան առարկան դարձած: Եկան, խառնուեցան ժողովուրդին մէջ, գացին Գողթան գաւառ,

գտան հայոց Գիրը, վերածեցին Աստուծոյ խօսքը հայո՛ւ խօսքին. մէկ խօսքով՝ շաղախուեցան իրենց ժողովուրդի կեանքին մէջ, ճշմարտութիւնը թարգմանեցին կեանքով, գործով եւ գիրով:

Եթէ ուզենք ճանչնալ հոգեւորականութեան իրերը ուսուցիչ եւ տեսիլքի տէր դաստիարակ՝ բառի հին իմաստով, պիտի դիմենք նոյն ինքն իրեն, եւ իր խօսքերու մէջէն ճանչնանք իր մտածումի աշխարհը, իր դաստիարակի, ուսուցիչի հոգեբանութիւնը: Նախ՝ իր տեսիլքը եւ գնահատութիւնը՝ մեր մտաւորական սերունդին հանդէպ: «Աշակերտութիւն եւ առաքելութիւն» խորագիրը կրող յօդուածի մը մէջ, Հայր Գարեգինը կը վերլուծէր աշակերտութեան եւ առաքելութեան յղացքները, եւ կ'ըսէր.

Աշակերտիլ հարկ էր՝ աշակերտելէ առաջ: Ինչպէս՝ լեցուիլ լեցնելէ առաջ: Առնել՝ տալէ առաջ:

Աշակերտութիւնը, իր խորքին մէջ, ուրիշ բան չէ, արդարեւ, եթէ ոչ հետեւողութիւն մը մտածումի մը, գաղափարի մը, վարդապետութեան մը: Իմացական հասկացողութեամբ կամ սովորութեան կամ տրամադրութեամբ ընդունում մը, իւրացում մը գաղափարաբանութեան մը:

Եւ ապա կ'եզրակացնէր. Առանց առաքելութեան՝ իմաստ պիտի չունենար ըմտելիներու աշակերտութիւնը: Մին՝ սկիզբ, միւսը՝ վախճան: Մին՝ ամփոփումն ուժ, միւսը՝ այդ ուժին բանալին, անոր իրագործումը պայմանաւորող, գայն իսկապէ՛ս, իրապէ՛ս, ուժ ընող: Հետեւաբար՝ իրարմով գիրար կ'պարեցնեն, գիրար կ'արդարացնեն:

Հետեւներէն երբ մեր նայուածքը մօտեցընէք մեր ժամանակներուն՝ երկու մեծ նախադրեալներ վրայ Արեւելահայաստանի եւ Արեւմտահայաստանի աշակերտութեան եւ առաքելութեան պատկերը նայե՛ք, իր խորքի հիմնական գիծերուն մէջ. գոյներն են միայն տարբեր՝ ժամանակեւ եւ միջավայրէն եկող՝ առաւելաբար:

Գորբատի սերունդը, էջմիածնական սերունդը Արեւելեան ճիւղին վրայ՝ գերմանական մշակոյթի տիրապետող ազդեցութեամբ կազմուած՝ կազմեցին գաղափարական եւ բանասիրական-գրական այն մեծ շարժումները, որոնք ժԹ՝ դարու մեր ազգային եւ մշակութային կեանքին հարազատագոյն եւ զօրաւորագոյն արտայայտութիւնները եղան, իբրեւ առաքելական գործունէութեան արգասիքներ:

Շար-ը՝ էջ 10

ՊԱՐՈՆՏԵՐԻ «ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՊԱՐԻՍՊ»-Ի ՈՐՈՇՈՒՄԸ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ

Իր տեղեկութիւնները Գանատայի Հայկական Համախարհային Դաշինքը կազմակերպութեան հասարակական յարաբերութիւններու գրասենեակէն քաղելով՝ հայրենի «Ազգ» թերթը վերապահութեամբ կը հաղորդէ, որ Խարայէլի կառավարութիւնը եւ բանապէր վերատեսուցութեան ենթարկած են Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան պատկանող Պարոնտէր կալուածին մէջէն անցնելիք «ապահովութեան պարիսպ»ի կառուցման որոշումը:

Որոշումին փոփոխութեամբ պարիսպը հայապատկան կալուածէն անցնելու փոխարէն պիտի կառուցուի անոր եւ Բեթղէմի պաղեստինեան հողերուն միջեւ՝ նուազեցնելով կալուածին հասնելիք վնասը:

Կազմակերպութիւնը նշած է, թէ «ապահովութեան պարիսպը» հայապատկան կալուածներու եզրին կառուցելու առաջարկը Խարայէլի պաշտպանութեան նախարարութեան ներկայացուած է Երուսաղէմի Հայոց Թորգոմ արք. Մանուէլեան պատրիարքին կողմէ, սակայն օրին առաջարկը մերժուած է եւ պատրիարքութիւնը ստիպուած գայն ներկայացուցած է Խարայէլի Գերագոյն ատենին:

Հայկական Համախարհային Դաշինքը զգուշաւոր լաւատեսութեամբ հաղորդած է լուրը եւ նոյն զգուշաւորութեամբ անոր արձագանգած է նաեւ «Ազգ» օրաթերթը:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԸ

Հայկական հանրագիտարանի գլխաւոր խմբագրութիւնը, Յովհաննէս Այվազեանի գլխաւորութեամբ, անցեալ շաբաթակիցին լոյս ընծայեց «Քրիստոնեայ Հայագիտարան» հանրագիտարանը:

Հանրագիտարանը լոյս տեսաւ լիբանանահայ ժիւրայր եւ Յասմէկ Գարեգինեաներու մեկենասութեամբ: ԵՆԻՆԵՍՔՕԻ Հայաստանի ազգային յանձնախումբը իր կարգին ջանակցեցաւ անոր պատրաստութեան:

Հայագիտարանին հրատարակման նպատակն է ցոյց տալ Հայաստանի տեղը քրիստոնեայ աշխարհին մէջ եւ բացայայտել քրիստոնեայ քաղաքակրթութեան եւ համամարդկային մշակոյթին մէջ հայ ժողովուրդին բերած իւրապատուկ աւանդը:

Հանրագիտարանը կը բովանդակէ 1070 յօդուած, 12 քարտէս եւ շուրջ 700 գուռուտներ եւ սեւ-ճերմակ նկարներ:

ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

● 22 Օգոստոսին, Զաւարթի Մայլա շրջանի կարմրավան (Ղարլիլիսէ) գիւղին մէջ տեղի ունեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ վերաբացման առաջին տարեդարձը: Մասնաբար սրկ. Ղուկիկեան այս առիթով ըսաւ, թէ այսուհետեւ, կարմրավանքիները 22 Օգոստոսը պիտի նշեն իբրեւ եկեղեցւոյ օրը:

● Վերջերս, Թեհրանի մէջ մահացաւ 92ամեայ ծովանկարիչ Յարութիւն Միհրան: Ան մասնակցած է տեղական ու միջազգային բազմաթիւ ցուցահանդէսներու: Իր գործերը ներկայացուած են Հայաստանի, Վենետիկի, Թեհրանի, Մեքսիկոյ Արեւելքի շարք մը քաղաքներու, Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի մէջ: Ան եղած է Գեաւ կրթական, հասարակական գործիչ, ուսուցիչ, դերասան, «Ալիք» օրաթերթի աշխատակից եւ իրանահայ գրողներու միութեան անդամ:

● Հոկտեմբերի սկիզբը, Հայաստանի մէջ պիտի սկսի գործել հեռատեսիլի նոր կայան մը՝ «Շարժ», որուն սփռումները պիտի տարածուին Երեւանի եւ արուարձաններուն մէջ: «Շարժ» պիտի սկսի 16 ժամուան սփռումով եւ հետագային պիտի աւելցնէ սփռումի ժամերը: Կայանը պիտի ըլլայ անձնական եւ պիտի փորձէ ըլլալ արդար եւ անկողմնակալ:

● 27 Օգոստոսին, Երեւանի մէջ նշուեցաւ պատմաբան, դիւանագետ եւ լրագրող Հենրիկ Լիլոյեանի ծննդեան 70ամեակը: Հանդիսութեան ընթացքին ներկայացուեցաւ «աշխարհի ու մարդկութեան սիրահար» Հենրիկ Լիլոյեանի կենսագրական եւ անոր կրթած ուղին: Ան մեծ աշխատանք տարած է լրագրական եւ մշակութային բնագաւառներու մէջ եւ անոր ջանքերով արժեքաւոր բազմաթիւ ձեռագիրներ եւ հրատարակութիւններ փրկուած են կորուստէ:

● Չինաստանի կառավարութիւնը անցեալ շաբաթ Հայաստանին նուիրեց 40 թրաքոր, որոնք մօտ օրէն պիտի հասնին Երեւան: Այս օժանդակութիւնը իր տեսակին մէջ առաջինն է, Չինաստան նախապէս Հայաստանին նուիրած է երկրագործական այլ աւարքեր եւ թրաքորներ:

● Շաբաթ, 24 Օգոստոսին, Երեւանի մէջ տեղի ունեցաւ հայ փաստաբաններու երկու միութիւններու միացեալ ընդհանուր ժողովը, որուն ընթացքին քննարկուեցաւ երկու միութիւններուն միացման հարցը: Ժողովին յառաջացաւ Փաստաբաններու Միջազգային Միութիւնը: Միութեան կ'անդամակցին Հայաստանէ 180 փաստաբաններ:

● Հայաստանի մէջ այսօր կը գործեն 28 դրամատուներ, որոնցմէ ութը կը գտնուի յատուկ հսկողութեան տակ, իսկ անոնցմէ երկուքը կը գտնուին լուծարման վտանգի տակ:

● Սեպտեմբեր 3ին, Երեւանի պետական համալսարանի վերամուտի առիթով տեղի պիտի ունենայ Մետրապ Մշտնոցի եւ Սահակ Պարթեւի յուշարձանի բացման արարողութիւնը: Քանգալը գործն է քանդակագործ Արա Սարգսեանի:

● 1979ի իսլամական յեղափոխութենէն ետք առաջին անգամ ըլլալով՝ անցեալ շաբաթ Թեհրանի մէջ տեղի ունեցաւ օհեթայի ներկայացուած: Իրանահայ 10՝ ընդհանուր ձգնաճարեան ներկայացուց իր կողմէ օհեթայի վերածուած Ֆիրտուսի «Ռոստամ եւ Զարայ» պոէման:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԳԵԱՆ 70ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԵՉ

Էջմիածնի մամուլի դիւանէն ստացուած հաղորդագրութեան մը կը տեղեկանանք, թէ Կիլիկի, 25 Օգոստոսին, էջմիածնի մէջ հանդիսաւոր շուրջով նշուած է Ամենայն Հայոց Գարեգին Ա. կաթողիկոսի ծննդեան 70ամեակը: Այս առիթով մատուցուած է պատարագ, որուն ճերմակ գտնուած են Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան միաբաններ, երջանկաշիջատակ կաթողիկոսին հարգատները եւ Ս. Նահանգներու եկեղեցիներու Ազգային Խորհուրդի պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ խորհուրդի նախագահ դոկտ. Ռոպերթ Էտկարի:



Հոգեհանգստեան պաշտօն՝ Գարեգին Ա. կաթողիկոսի շիրմին շուրջ

Յաւարտ պատարագի, հոգեհանգստեան պաշտօն կատարուած է կաթողիկոսի շիրմիմէ մօտ:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7:00ին, կատարուած է Եղիշէ Մանուկեան մատենադարանի եւ Գարեգին Ա. Աստուածաբանական, Հայագիտական Հետազոտական Կեդրոնի յուշարարին օրհնութիւնը՝ ձեռամբ Ամենայն Հայոց Գարեգին Ա. կաթողիկոսին: Յանուն միաբանութեան բացման խօսք արտասանած է Տաթև Արք. Սարգսեան:

Յուշարարի օրհնութեանէն ետք, ներկայներուն իր խօսքը ուղղած է Գարեգին Ա. կաթողիկոս:

Երեկոյեան ժամը 8:00ին, վեհաբանի հանդիսութիւններու դահլիճին մէջ տեղի ունեցած է Գարեգին Ա. կաթողիկոսի ծննդեան 70ամեակին նուիրուած յուշ-երեկոյն, նախագահութեամբ՝ Գարեգին Ա. կաթողիկոսին: Հանդիսութեան ւարտած է կաթողիկոսին «Պահպանելի»-ով: Գեղարուեստական յայտագիրով ելոյթ ունեցած է Երեւանի կամերային երգչախումբը, ղեկավարութեամբ Յարութիւն Թոփիկեանի:

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՅԵԼԱԾ ԹՈՒՐԳ ԱՌԵԻՏՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԵՏԸ ԿԸ ՊԱՇՏՏՈՆԱԶՐԿՈՒԻ

Թուրք առեւտրականներու պատուիրակութեան մը Հայաստան կատարած այցելութենէն հազիւ երկու շաբաթ ետք, թրքական «Հիւրիլէթ» թերթը կը տեղեկացնէ, թէ պատուիրակութեան պետը՝ Թայյար Օրալ եւ իր վարչակազմի անդամները պաշտօնազրկուած են իգտիլի Առեւտուրի եւ ճարտարարուեստի Գրասենեակի նախագահի եւ խորհրդականներու իրենց պաշտօններէն:

Պաշտօնազրկման քայլը առնուած է, որովհետեւ «անոնք ղէպի Հայաստան պտոյտ մը կազմակերպած են առանց արտօնութիւն ստանալու իրենց մաս կազմած խորհուրդէն»: Օրալի եւ իր պաշտօնակիցներուն կողքին պաշտօնանկ եղած են նաեւ էրզրումցի եւ կարսեցի կարգ մը առեւտրականներ:

Իգտիլի Առեւտուրի եւ ճարտարարուեստի Գրասենեակի խորհուրդի անդամ Իլհան Աքէրլ խորհուրդին յղած է խնդրագիր մը, ուր ան նշած է, թէ Թայյար Օրալ, շարաշահելով իր պաշտօնը, առանց արտօնութեան եւ անտեղի կարգադրութիւններով այցելած է Հայաստան, ինչ որ «միջպետական արտնդուութիւն ստեղծած է»: Խորհուրդի նիստին մասնակցած 14 անդամներէն 13ը համաձայն գտնուած են Աքէրլի բացատրութեան եւ պաշտօնազրկած են Թայյար Օրալը:

Իր կարգին, Օրալ յայտնած է, թէ Խորհուրդին մէջ արդէն նկատելի էր լարուած միջոցառում մը, որ անհիմն պատճառաբանութիւններով շահագործուեցաւ պաշտօնակիցներուն կողմէ:

ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Հայրենի «Հայոց Աշխարհ» օրաթերթի 27 Օգոստոսի թիւէն առնելով, ստորեւ կու տանք ուշագրաւ հարցազրոյց մը՝ «Ազգային Անվտանգութիւն» կուսակցութեան նախագահ Գառնիկ Իսազուլեանի հետ:

Հարցազրոյցից մէջ, Իսազուլեան Հայաստանի քաղաքական ներքին կեանքի զարգացումներուն անդրադառնալէ ետք, կարեւոր մտամտելիքներ կը կատարէ Հայաստանի նկատմամբ Մ. Նահանգներու եւ Թուրքիոյ վարած քաղաքականութիւններուն մասին: Ան լուսարձակի տակ կ'առնէ քրքրական հետախուզական մարմիններու գործունեութիւնը Հայաստանի մէջ:

Իսազուլեան այս առթիւ կը պարզէ նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման համար ամերիկեան կարգ մը կազմակերպութիւններու, Հայաստանի եւ Ազրայձանի քաղաքական որոշ ուժերուն հետ ունեցած կասկածելի կապերը:

ՀԱՐՑՈՒՄ. Պարոն Իսազուլեան, վերջերս յայտարարել էիք, որ Միացեալ Նահանգները ուզում են ապարկեցնել հետազոտողներին Ռուսիոյ Բոնչարեանցի եւ Սերժ Սարգսեանցի, Ղարաբաղեան հարցը լուծելով Ազրայձանի օգտին: Ինչո՞վ կը հիմնադրէք ձեր կարծիքը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Արտաքին ուժերն այդ ուղղութեամբ լուրջ աշխատանք են կատարում՝ շփումներ հաստատելով Հայաստանում գործող կուսակցութիւններին եւ հասարակական կազմակերպութիւններին հետ: Փորձ է արւում դրսի ուժերի հոգիանալու թեմամբ գործող իշխանութեան ղեմ համախոհութիւն ձեւաւորել եւ իշխանութեան բերել այն մարդուն, որը կը համաձայնի Ղարաբաղի յանձնմանը:

Բնականաբար, քաղաքական այդ ուժերի շարքում իր ուրոյն տեղն է գրւում ՀՀԸՆ, որը Հայաստանում ամենակազմակերպուած ուժերից է ներկայիս ընդդիմադիր, սակայն, հայերը գիշորի, իսկ Թուրքերը յաղթողի կարգավիճակում են: Սա թեան բերել այն մարդուն, որը կը համաձայնի Ղարաբաղի յանձնմանը: Կարելի է ասել, որ գործող նախագահի ղեմ քարոզարշաւն ու գործողութիւնները կազմակերպւում են ուղղորդւում են մեծ մասամբ այդ ուժի կողմից:

Հ. Սակայն Մ. Նահանգների միջամտութիւնը Հայաստանի ներքին կարգի շտապ կարգի չի նշանակում: Միջնորդաւորուած է:

Պ. Մինչ այժմ ես չեմ խօսել ուղղակի միջամտութեան մասին: Խօսք այն կազմակերպութիւնների եւ զրսի չորրորդական կարգի չի նշանակում: Գործողութիւնները միջոցով ներգործելի հայաստանեան կուսակցութիւններին վրայ եւ ուղղորդել գալիք ընտրական գործընթացները:

Գերտէրութիւններն ի հարկէ հետաքրքրութիւններ ունեն տարածաշրջանում եւ մասնաւորապէս Հայաստանում: Սակայն ամենաշահագրգիռը Հայաստանում իշխանութիւններին ձեւաւորման հետ կապուած Ազրայձանին ու Թուրքիան են: Հէնց նրանք էլ աշխատում են իրենց շահերին համապատասխան ուղղորդել գործընթացները, քանի որ անցնող տարիներն ապացուցեցին. Հայաստանի ներկայիս նախագահը Ղարաբաղի, Յեղափոխութեան եւ առհասարակ պահանջատիրութեան հետ կապուած հարցերում շատ յստակ դիրքորոշում ունի: Այդ դիրքորոշումը խորսիւրւած է ազգային շահերի պաշտպանութեան վրայ

եւ, ըստ այդմ, նա շատ անյարմար գրուցակից է Թուրքիայի եւ Ազրայձանի համար:

Եթէ ուշադիր հետեւենք Հայաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականութեանը, նրա կառավարութեան կազմում եղած փոփոխութիւններին եւ Մ. Նահանգներում գործող որոշ հայկական հասարակական կազմակերպութիւններին մէջ տեղի ունեցած քառալից տեղաշարժերին, շատ հետաքրքիր բաներ կը պարզուեն: Այդ կազմակերպութիւնները թրքական կողմի հետ տարբեր շփումներ են ունենում: Այդ հանդիպումներում, սակայն, հայերը գիշորի, իսկ Թուրքերը յաղթողի կարգավիճակում են: Սա թեան բերել այն մարդուն, որը կը համաձայնի Ղարաբաղի յանձնմանը: Կարելի է ասել, որ գործող նախագահի ղեմ քարոզարշաւն ու գործողութիւնները կազմակերպւում են ուղղորդւում են մեծ մասամբ այդ ուժի կողմից:

Այս համատեքստում է, որ Հայաստանեան որոշ կուսակցութիւններին ներկայացուցիչներին այցելութիւնը Միացեալ Նահանգներ եւ նրանց շփումը ժողովրդավարութեան ազգային ինստիտուտի ներկայացուցիչի, թրքամէտ գործիչ ներսոն Լեզսկու, ինչպէս նաեւ Պոսթընի հակամարտութիւնների կարգաւորման խմբի հետ, մտորումների տեղիք է տալիս:

Հ. Եթէ կարելի է՝ վերն առածը ւաւելի պարզաբանէք:

Պ. Յուլիսի 19-28ը Հայաստանում այդ նոյն մամբիկեան կազմակերպութիւնները կազմակերպեցին սեմինար, որտեղ ամէն կերպ փորձում էին մասնակիցներին հանրապետական կազմակերպութեան հարցը Ազրայձանի օգտին լուծելը այլընտրանք չունէր: Այդ ժամանակ է հէնց այդ ուժերի հրահրումը Մ. Նահանգներ մեկնեց ազրայձանական կուսակցութիւններին: Ուժեր, որոնք շատ արմատական են տրամադրուած Ղարաբաղի հարցի կարգաւորման հարցը լուծելու: Եւ դրանց թւում էր Մուստաֆա կուսակցութեան ղեկավար Իսա Ղամբարովը:

Այնուհետեւ նոյն այդ ինստիտուտի եւ Պոսթընի խմբի հրահրումը Մ. Նահանգներ մեկնեց Հայաստանի 7 քաղաքական կուսակցութիւններին ներկայացուցիչներին մի պատուիրակութիւն: Այնտեղ ընդգրկուած էին գործիչներ ՀՀԸԻց, ԱժՄից, ԼԴԿԻց, ԱԻՄից,

ԱժԿԻց եւ այլն: Ես ասել եմ այն մասին, թէ ինչ խօսակցութիւններ են նրանք ունեցել նոյն այդ նիստն Լեզսկու հետ եւ որպէս հաստատումն զրա «Գոյոս Արմէնի»-ում տպագրուեց նրանց լուսակարգ:

Հ. Համաձայնեք, սակայն, որ շփումները զրսի աշխարհի հետ քառալից ուժերի գործընթացի կերպ է, եւ դրանք ունենում են կարող արգելել:

Պ. Խօսքն ամենեւին էլ արգելի մասին չէ: Մենք ինքներս էլ սահնակումներ ենք ունենում տարբեր երկրների ներկայացուցիչների հետ:

Բայց ցանկացած շփում որեւէ պետութեան, որեւէ կառույցի հետ պէտք է ներթափանցի այնպիսի դիրքորոշումների որդեգրում, որոնք վտանգում են մեր ազգային շահերը: Անկախ նրանից, թէ վերը նշուած կազմակերպութիւնները ինչ յարաբերութիւններ մէջ են գործող նախագահի հետ: Ընդդիմադիր լինելը չի կարող դառնալ պատճառ ներքաշուելու ասկահայկեան խաղի մէջ: Եթէ Հայ քաղաքական գործիչները Մ. Նահանգներում չըլնում են թրքական դրոշ կողմ ւստորստով, դա բոլորովին էլ համարժէք չէ այն իրողութեանը, որ Հայկական շուկայում թրքական իւր շահուտում: Ազրայձանցիներն էլ նոյն կազմակերպութեան հրահրում էին մեկնել Մ. Նահանգներ, ըստ հայկական դրոշ կողմ ւստորստով չէին շրջադարձը:

Հ. Ժողովրդավարութեան ազգային ինստիտուտը ամերիկեան կազմակերպութիւններին համապատասխանեցնելու է: Ի՞նչ կապ ունի այդ տեղի թուրքիան:

Պ. Այդ ինստիտուտի եւ նրա ղեկավարների ողջ գործունեութիւնը ցոյց է տալիս, որ նրանք թրքամէտ են ազրայձանական մտայնութիւններ ունեն, ֆինանսաւորում են Թուրքիայի տարբեր կառույցներից եւ Ազրայձանի քարտիզներին ընկերութիւններին: Նիստն Լեզսկու ազրայձանական-ամերիկեան բարեկամութեան կոմիտէի համապատասխանեցնելու է: Սա, կարծում եմ, բաւարար փաստ է մեր կուսակցութիւնների համար միան մարդկանց հետ շփումներից ձեռնպահ մնալու առումով, որովհետեւ նրանք խնդր ունեն արդարացնել Թուրքիայից եւ Ազրայձանից իրենց ստացած գումարները եւ աշխատում են այդ խնդրը լուծել հայկական կազմակերպութիւններին պարտաւորական դիրքորոշման հակելու միջոցով:

Ծարւ.՝ Էջ 10

«ԱՆՍԱՐԱՆ ԱՏԵԼՈՒԹԵԱՄ» ԼԵՅՈՒՍԾ՝

ՌՈՒՄՍ ԽՈՐՀՈՒՐԳ ԿՈՒ ԵԱՅ ՀԱՅԵՐԸ «ԾՈՒՆԿԻ ԲԵՐԵԼՈՒ»

Այս օրերուն իր թուրք կնոջ հետ Պոլիս այցելող ամերիկացի տիրահաշակ Սամուէլ Ուիլսոն «Բրիտանական անաբեկիչ երկրի մը՝ Հայաստանի գաղտնիքները» գիրքին հեղինակը, ազրայձանական «525րդ» թերթին մէջ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ, անցեալ շաբաթ խորհուրդ տուած է վրաստանի, որ «հայերու հողային պահանջներուն զոհ չդառնալու համար Ազրայձանի եւ Թուրքիոյ հետ գործակցի» Հայաստանը «ծուկի բերելու» համար:

Թերթը հրատարակած է Ուիլսոնի հետ իր կատարած հարցազրոյցին մէջ մասը, որուն մէջ ան կ'անդրադառնայ հակահայ քարոզչութեան սկսելու իր հիմնական շարժումներին: Լրագրողի այն հարցումին, թէ ինչո՞ւ իրաւաբանի կրթութիւն ունեցող Ուիլսոն յանկարծ սկսած է հետաքրքրուել հայկական հարցով, Ուիլսոն պատասխանած է, որ իր հետաքրքրութիւնը արթնացած է, երբ Բոնկրէսի իր ընկերներէն մէկը իրեն փոխանցած է «պատերազմի տարիներուն Ռուսիոյ կողմէ Հայաստանի ցուցաբերուած ռազմական օժանդակութեան մասին փաստերը»:

Ուիլսոն յայտնած է, թէ երբ լսած է վերջին 10 տարիներուն Միացեալ Նահանգներու հայկական գաղութին Հայաստան ուղարկած մարդասիրական օժանդակութեան քանակին մասին, ամերիկացի հարիտուններու «գրպանը յափտակող» հայ ժողովուրդին ղեմ լեցուած է «անահաման տոնելութեան»:

Ուիլսոն դիտել տուած է, որ իրեն համար անհասկնալի է, թէ ինչպէս Միացեալ Նահանգներու քանի մը տասնեակ հազարեց հայկական գաղութը «յանկարծ» գերազանցած է 1 միլիոնի եւ ներկայիս ի վիճակի է օրէնսդիր մարմիններուն մօտ հայնպաստ որոշումներու համար միլիոնաւոր տոյարներ ծախսելու: Ան նշած է, որ ներկայիս կ'աշխատի «Հիթլերի հայկական նախագիծ» խորագրով այլ գիրքի մը վրայ, որուն մէջ կը թուէ «նացիական Գերմանիոյ հայերու կատարած ծառայութիւնները եւ հրեաներու ողջակողմին հայերու մասնակցութեան մասին փաստերը»:

Ուիլսոն հայերը մեղադրած է շրջանին խաղաղութիւնը խափանելու յանցանքով եւ ըսած է, թէ անոնց պահանջները պատճառ դարձած են, որ շրջանի ազգերուն միջեւ սանձարձակ հակամարտութիւններ ծագին: Ան նաեւ յայտնած է, որ Միացեալ Նահանգներու գիտական շրջանակները երբեք չեն ընդունիր Հայկական Յեղափոխութիւնը: Ամերիկացի նորիւրկ վարձկանը խոստովանած է, որ ինք յաճախ այցելած է Թուրքիա եւ կը հաւատայ, որ հոն ապրող հայերը ունին «միտքի ու խիղճի ամբողջական ազատութիւն»: Ան դիտել տուած է, որ Թուրքիոյ մէջ հայկական եկեղեցիները աւելի շատ են, քան Հայաստանի եկեղեցիները:

Ուիլսոն յայտնած է, որ հայկական կազմակերպութիւնները իր եւ շրջապատին նկատմամբ «անաբեկչական արարքներ գործած են» եւ սպառնալիքներ կատարած: Ան խոստացած է, որ շուտով լոյս կ'ընծայէ «Միացեալ Նահանգներու եւ ամբողջ քրիստոնեական աշխարհին մէջ հայկական անաբեկչութիւնը» խորագրով գիրքը:

Ուիլսոն քննադատած է ԵԱՀԿի Մինսքի խմբակին քրիստոնեայ նախագահները եւ ազերիներուն կողմ ուղղած է, որ քաղաքական եւ ռազմական բոլոր միջոցները օգտագործեն՝ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծելու համար: Ապա, «յանուն արդարութեան, Աստուծոյ եւ սեփական եսի հանդէպ ունեցած իր հաւատքին» Ուիլսոն ինքզինք հայերու թշնամի նկատած է: «525րդ» թերթին համաձայն, Ուիլսոն այս շաբաթավերջին պիտի այցելէ Ազրայձանը:

Թրքական «Միլիլիէթ» թերթը իր կարգին կը գրէ, թէ Ուիլսոն Պոլիս գտնուած միջոցին հայկական պատմագիտական շրջանակները ամբաստանած է ապատեղեկատուութիւն տարածելու եւ հայկական արխիւները փակ պահելու յանցանքով: Ան յայտնած է, որ կը ծրագրէ թրքական լրագրի համար գորաւոր հիմեր տեղեկելու նպատակով՝ յառաջիկայ տարի թրքագիտութեան հիմնարկ մը հաստատել Արքայապետի համալսարանին մէջ:

ՖԻԶՈՒԼԻԻ ԵՒ ԶԲԵՐԱՅԻԼԻ ԿՈՐՈՒՄՍԻՆ 9ԱՄԵԼԻԿԻ ԶԵՆԱՐԿԻ ԸՆԹԱՌՈՒՍ՝

ԱՂԵՐԿՆԵՐ ԿԸ ՀՐԿԻՉԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՕՇԱԿԸ

Վերջերս ազերիներ ձեռնարկով մը նշած են Ֆիզուլիի եւ Զեբրայիլի կորուստին 9ամեակը: «Զեբրայիլ» թերթին համաձայն, Օգոստոս 25ին, Պաքուի «Նահատակներու պուրակ»-ին մէջ տեղի ունեցած է ծաղկապակի զետեղում, որուն ներկայ եղած են նաեւ խորհրդարանականներ եւ քաղաքական ընդդիմադիր շարք մը գործիչներ: Թերթը յայտնած է նաեւ, թէ պետական պաշտօնական անձնաւորութիւններ ներկայ չեն եղած հանդիսութեան:

«Գէյրաթ» կուսակցութեան նախագահ Մեհտիբե իր ելույթին ընթացքին ըսած է, թէ Ազրայձանի նախագահը պատերազմը կորսնցնելէ ետք աշողած է միջազգային հանրութեան միլիոնաւոր տոյարներ ստանալ եւ տասնեակ հանդիպումներ ունենալ Հայաստանի նախագահին հետ: Ան դիտել տուած է, որ այդպէս Արեւել ընդդիմութեան ներկայացուցիչներուն հետ հանդիպելու ժամանակ չէ ունեցած:

«Ղարաբաղի ազատագրութեան կազմակերպութիւնը» թուրքիկները բաժնած է ներկայներուն եւ խոստրէն քննադատած է Լեռնային Ղարաբաղի տագնապը լուծելու եւ «կորսնցուցած շրջաններուն վերատիրանալու» Ազրայձանի իշխանութիւններուն ցուցաբերած անկարողութիւնը:

Զեռնարկին աւարտին ազերիներ հրկիզած են Հայաստանի դրօշակը:

ԱԶՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ

ԵՐԲ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՍԱՀՄԱՆ ՉԻ ճԱՆՉՆԱՐ...

Ազրայձանական մամուլը կը շարունակէ անհիմն մեղադրանքներ արձակել հայերու եւ Հայաստանի հասցէին: Ազրայձանական թերթեր այս անգամ հայերը կը մեղադրեն գերիներու առեւտուրի շուկային մէջ «ամուր արմատներ» ունենալու ամբաստանութեամբ:

«Զեբրայիլ» թերթը հրատարակած է ազրայձանացի «Քաղաքագէտներ» մէկ «ուսումնասիրութիւնը», որուն համաձայն հայկական շարք մը կազմակերպութիւններ եւ ընկերութիւններ աշխուժ գործունեութիւն ծաւալած են գերիներու առեւտուրի շուկային մէջ, մեծ շահ ապահովելու մտադրուած են: Թերթը «մարդոց անօրինակ անտեղափոխութեան եւ առեւտուրի մէջ մասնագիտացած» հայկական ընկերութիւններ կը նկատէ «Յակոբ Յակոբեան», «Յրանսա - Հայաստան միացեալ կեդրոն», «Կարէն եւ Ռուտոլֆ», «Միքիլան, Սարգսեան եւ ընկերներ», ինչպէս նաեւ այլ կազմակերպութիւններ: «Զեբրայիլ»-ն կը պնդէ, որ հայկական այս կազմակերպութիւններն էին, որոնք ժամանակին համակարգած են «գերի բռնուած ազրայձանցի կիներու» Սուրիա, Յրանսա, Ռուսիա, Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Մալեզիա եւ այլ երկրներ տեղափոխելու գործը...

«ԱՉԳԱԿ»-ի
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱՉԳԱԿ»-ի հետ կապուելու համար ձեռնայնով
հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

7րդ Արուեստ



ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ԱՇԽԱՐՀԷՆ ՆԵՐՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՅԼԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՆ՝ ՄՈՆՐԷԱԼԻ ՓԱՌԱՏՕՆԸ



Սոնրէալի փառատօնին որմագրը

22 Օգոստոսին 2 Սեպտեմբեր տեղի կ'ունենայ քանատական շարժապատկերի աշխարհին կարեւոր փառատօններէն մէկը՝ Մոնրէալի Շարժապատկերի Միջազգային փառատօնը:

1977ին ծնած այս միջազգային փառատօնը կը նպատակադրէ քաջայերբէ շարժապատկերի աշխարհին ներս մշակութային այլազանութիւնը, ինչպէս նաեւ մղել երիտասարդ ուսանողները՝

աշխարհին ներկայացնելու իրենց իրագործումները: Հիւսիսային Ամերիկայի շարժապատկերի մրցակցութեան ընդթովայս միակ փառատօնը կը հաւասարի Քաննի, Պերլինի եւ Վենետիկի փառատօններուն: Միաժամանակ, անոր կազմակերպիչները զայն կը նկատեն եթերորդ արուեստին նուիրուած տօնակատարութիւն մը, որուն ընթացքին աշխարհի զանազան կողմերէն կը համախմբուին

անոր երկրպագուները: Վերջին քառորդ դարուն այս փառատօնը եղած է շարժապատկերի արուեստին եւ արհեստագիտութեան եղափոխութեան վկաններէն մէկը: Միաժամանակ ան կը նկատուի բառացիօրէն աշխարհի բոլոր կողմերէն եկած եւ եթերորդ արուեստի բոլոր հոսանքները ներկայացնող փառատօն մը:

Մոնրէալի այս տարւան փառատօնը կը հիւրընկալէ աւելի քան երեք



«Էֆթըր ֆրիտըմ»էն տեսարան մը

հարիւր ժապաւէններ: Յարժապատկերը երկրորդ տարին ըլլալով, անոնց շուրջ կ'էջ կը ներկայանայ մրցակցութեան հասնողներէն, եւրոպական մար: Նոյնպէս երկրորդ տարին ըլլալով է, որ Հարաւային Ամերիկայի շարժապատկերին ծառայողները ի մի խմբուելու ճիգով, փառատօնը յատուկ բաժին մը յատկացուցած է յատին ամերիկեան շարժապատկերին:

Շարժապատկերը ներկայացնող գործերու կողմէն, Յարաւային, Իտալիայէն, Միացեալ Նահանգներէն, եւրոպական այլ երկիրներէ, նախկին խորհրդային երկիրներէ, Չինաստանէն, Հնդկաստանէն եւ Միջին Արեւելքէն ժապաւէններ:

Մոնրէալի Շարժապատկերի Միջազգային փառատօնը միշտ ալ մեծ կարեւորութիւն տուած է ժապաւէններէն քանատական




«Օթօ»էն տեսարան մը

նակցին քանատական

Ծար.ը՝ էջ 8

Շարժապատկեր «Օ». 21րդ դարու մեջ՝ Շէքսպիրեան Ողբերգութիւն



Անցեալ տարի հրապարակ իջած «Համլէթ»էն ետք «Օ»ն երկրորդ ժապաւէնն է, որ ժամանակակից դասակարգումով կը ներկայացնէ Շէքսպիրի դասական ողբերգութիւնները: Իր մէջ արտայայտուող դպրոցական եւ պատանեկան բռնութիւններուն պատճառով քանցից յետագուած այս ժապաւէնը (2001ի արտադրութիւն), ծանուցումներու զանազան հանգրուաններէ ետք, վերջապէս լիբանանեան սրահներուն մէջ այս շաբաթ կը սկսի ցուցադրուի:

Շէքսպիրի «Օթելլօ»ին ծանօթ հանդիսատեսը «Օ»ի առաջին վայրկեանէն իսկ կը նկատուի ակնհայտ բեմադրութեան արտադրութեան արտադրութեան միջոցով: Առանց մտադրուած սպիտակամորթներու միջավայրին միակ սեւամորթ ուսանողը՝ Օտելլօ (Յիշենք Օթելլօն) կը դառնայ պատմութեան դարձակապական աստղ մը: Ան իր շուրջ կը համախմբէ բարեկամներու բազմութիւն մը եւ կը վերածուի պատանեկան հերոսին: Նոյնիսկ նախանշուած Հիլարի (Շէքսպիրի եակոն) հայրը պատմութեան մարդիկը, կը նախընտրէ Օտելլօ, որ նաեւ կը վաշտէ գեղեցիկ Տեյլի (Տեյլի Գեյնօ) սերը:

Պատմութեան այս խնդրանքներէն եղանակին, երբ Օտելլօ կը գտնուի իր փառքի գագաթնակէտին, Հիլարի կը ծրագրէ անոր անկումը եւ զայն կը հարուածէ թիկունքէն:

Ժապաւէնին իւրաքանչիւր տեսարանին հետ լեռան նման կը կուտակուին նախ լուռ, ապա՝ պոռթկացող վայրագութիւնը, խորամանկութիւնը, նախանշուած, ատելութիւնը եւ պատանեկան կողմէ բարեցուցիչի, ոգելից ըմպելիի եւ գեղեցիկ գործածութիւնը: Անոնց կը հակադրուին դրական հերոսներուն միամիտ անմեղութիւնը եւ ծրագրուած դաւադրութեան անոնց կոյր մասնակցութիւնը:

Թեւեւ ժապաւէնին անուն տուող տիպարը Օտելլօն է, սակայն ան ժապաւէնին մէջ կ'ունենայ կրաւորական ներկայութիւն: Անոր վերջն ու անկումը կը ծրագրուին ուրիշներու կողմէ, իսկ ինք կը դառնայ միայն անոնց ծրագրերը իրականացնողը: Նոյնը կարելի է ըսել կեղծական տիպարները շրջապատող երկրորդական տիպարներուն անոնց ընկերներուն մասին, որոնց նոյնիսկ զգացումները կը ձեւաւորուին Հիլարիի մտքին մէջ: Հիլարիի զերով հանդէս եկած ծոշ շարքերէն անոնց հարազատութեամբ կը մարմնավորէ անոր տիպարը եւ կը յաջողի կլանել հանդիսատեսին ուշադրութիւնը: Տեղատեղանքի դերով հանդէս եկած Ճիլիա Սթիլը, որ նախապէս դեր ստանձնած էր «Համլէթ»ի ժամանակակից պատշաճացման մէջ, նոյնպէս կը յաջողի անմեղ, միամիտ ու գեղեցիկ հերոսուհիի կերպարը մարմնավորել: Իսկ Օտելլօի դերով Միլի Ֆիթըր իր խաղարկութեան լաւագոյն պահերը կը ցուցաբերէ պատմութեան դաժանութիւնը կը ցուցաբերէ պատմութեան դաժանութիւնը: Ժապաւէնը այսպիսով կը յաջողի համախմբել հոլիվուտեան «շուկայ»ի ամէնէն աւելի ժողովրդականութիւն վայելող եւ դերասանական իրենց սպարեզին առաջին քայլերը առնող աստղերը: Ինչ կը վերաբերի բեմադրութեան, ապա բեմադրիչ Թիմ Միլը Նելսըն յաջողած է առանց ձգձգումներու ներկայացնելու իրենց եւ յաջող միաձուլում մը կատարել դասական ճիւրիկ եւ ժամանակակից միջավայրին ու անոր հարցերուն միջեւ:

Անշուշտ, պատանեկան կողմէ պատանեկանութեան շէքսպիրեան գործադրուող սուկայի ոգիները, թմրեցուցիչի եւ ոգելից ըմպելիի գործածութիւնը այնքան ալ ճիշդ չեն պատանեկան հանդիսատեսներու համար պատրաստուած ժապաւէնի մը համար: Սակայն, այս մէկը մասամբ կը մեղմացնէ այն չքմեղմեցող, որ այս ժապաւէնին միջոցով պատանեկանները գիրեք հետաքրքրող ձեւով կը յաջողին թափանցել շէքսպիրեան աշխարհը:

Մինչ «Օ» կրնայ յաջողիլ պատանեկան հանդիսատեսներու աշխարհը ներս թափանցել, ան կրնայ նաեւ ոչ միայն զգոն ձգել, այլ՝ գայրացնել աւելի տարեց եւ դասական հաշակի տէր հանդիսատեսները: Բայց եւ այնպէս, ինչ ալ ըլլայ հանդիսատեսին տպաւորութիւնը, ան սրահէն կը հեռանայ շարունակելով մտածել ժապաւէնին արծարծած ճիւրեղներուն մասին:

ԱՐՅԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ԺԱՊԱՒԷՆՆԵՐ

Օգոստոսի սկիզբը, Շուէտի մէջ սկսաւ ցուցադրութիւնը Արցախի զաւտագրական պայքարին նուիրուած «Ո՛ր է յաղթանակը» ժապաւէնին, որ արդէն Յուլիանի ի վեր կը ցուցադրուի Երեւանի սրահներուն մէջ: Ժապաւէնին բեմադրիչներն են Փէօ Կոյմբուրիսթի եւ Սիւզան Նարայանի, որոնք աշխարհի զանազան շրջաններու մէջ տեղի ունեցող իրադարձութիւններու մասին վաւերագրական ժապաւէններ կը պատրաստեն: Անոնց բեմադրած ժապաւէններէն յիշենք «Վերադարձ դէպի Արարատ», «Անապահով հող», «Այդ կնոջ հայ արքայազնը» եւ այլն:

«Ո՛ր է յաղթանակը» ժապաւէնին մէջ ներկայացած է Արցախի ժողովուրդին պայքարը եւ անոր մասնակցներուն փորձառութիւնները: Ժապաւէնը պիտի ցուցադրուի նաեւ եւրոպական այլ երկիրներու մէջ:

●Այս ամառ Երեւանի մէջ սկսած են Հայաստանի տնտեսական շրջափակման մասին վաւերագրական ժապաւէնի մը պատրաստութեան աշխատանքները: «Հայաստան» երկիր շրջափակման մէջ» ժապաւէնով Ֆրանսահայ բեմադրիչ Տիբան Նուպար կը փորձէ աշխարհին ցոյց տալ, որ Հայաստանի տնտեսական շրջափակումը անօրինակ է եւ շրջափակման մէջ կը պահէ նոյնինքն զայն պարտադրող երկիրը՝ Ազըրպէյճանը:

Ժապաւէնը հիմնուած է Հայաստանի քաղաքական անձնավորութիւններու հետ կատարուած հարցազրույցներու վրայ: Նկարահանուած են նաեւ Հայաստանի մշակութային կոթողները եւ տեսարժան վայրերը:

ԹՈՐՈՆԹՈՅԻ ՓԱՌԱՏՕՆԸ ՊԻՏԻ ՆՇԷ 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԸ

Յառաջիկայ ամիս տեղի ունենալիք Թորոնթոյի Շարժապատկերի Միջազգային փառատօնին պիտի կատարուի առաջին ներկայացումը երկու ժապաւէններու, որոնք նուիրուած են Միացեալ Նահանգներու վրայ 11 Սեպտեմբերին տեղի ունեցած յարձակումներուն:

Ներկայացուող ժապաւէններուն առաջինն է դէպքէն ետք փրկարար աշխատանքներուն մասնակցած հրէշի մը նուիրուած թատերգութեան մը ժապաւէնի պատշաճացումը, որ կը կրէ «Տը կայր» խորագիրը: Անոր մէջ դերեր ստանձնած են Սիլուերի Ուիլզը եւ Էնթոնի Լափակլիա: Պիտի ցուցադրուի նաեւ վաւերագրական ժապաւէններու «11, 09, 1» խորագրու եւ հաւաքածոյ մը: Հաւաքածոն «11, 09, 1» կը կոչուի, որովհետեւ անոր մէջ ամփոփուած իւրաքանչիւր վաւերագրական ժապաւէնի տեւողութիւնն է տասնմէկ վայրկեան, ինչ երկվայրկեան եւ մէկ ֆրէյմ ժապաւէնի մը տեւողութիւնը կը չափուի նաեւ ֆրէյմներով: Ֆրէյմը լուսանկարներու նկարներուն նկարն է: Մէկ երկվայրկեանի տեւողութեամբ ժապաւէն մը կազմուած է քսանչորս ֆրէյմէն:

Անցեալ տարուան փառատօնին օրերուն էր, որ տեղի ունեցած էին 11 Սեպտեմբերի յարձակումները: Իրեն սուգի արտայայտութիւն, փառատօնը մէկ օր դարձեց ցուցած էր իր աշխատանքները:

Նշենք, որ Մոնրէալի փառատօնին բացումը պիտի կատարուի Սեպտեմբեր 5ին, Աթոմ Էլոյանի «Արարատ» ժապաւէնին ցուցադրութեամբ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՍՐԱՀՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Երկար ատենէ ի վեր սպասուած եւ ծանուցուած վիպային կատակերգութիւն մը այս շաբաթ կը հասնի շարժապատկերի իրաւանեան սրահները՝ ի մեծ ուրախութիւն այս տեսակի ժապաւէններով մեծ ժողովրդականութեան տիրացած Քամբրու Տիագի երկրպագուներուն:

«Տը սուիթսթ Թինկ» ժապաւէնը թարմ եւ ուրախ շունչ կը հաղորդէ էքշըն ժապաւէններով հարուստ իրաւանեան սրահներուն:

«Տը սուիթսթ Թինկ» կը համախմբէ բէքս ճամայի եւ սիրային արկածներու հետամուտ երիտասարդուհիներ, որոնք բարեկամութիւնը հիմնուած է իրարու սիրային կեանքին օժանդակելու եւ ապա՝ բաժանումներէն ետք գիրար միմիջարկու առաքելութեան վրայ: Ծիծաղաշարժ տեսարաններով, հիւմորով հարուստ բեմադրութեամբ այս ժապաւէնը, որուն մէջ Քամբրու Տիագի կողքին դերեր ստանձնած են նաեւ Քրիսթինա Էփրայիմը եւ Սելմա Պլէյն, ունի զուարթ եւ թեթեւ մթնոլորտ, բայց միաժամանակ՝ կանխատեսելի ընթացք եւ

աւարտ: Յամենայնդէպս, ժապաւէնին երեք գլխաւոր դերասանուհիները չեն յաղողի որ տալ իրենց լաւագոյնը, որուն համար կարելի է մեղադրել պարզապէս ժապաւէնին բեմադրութիւնը:

Ինչ կը վերաբերի լիբանանեան սրահներէն ներս ցուցադրուող մասնակցներու յատուկ ժապաւէններուն, ապա անոնց շարքին այս շաբաթ եկաւ աւելնալու նոր մը եւս՝ «Սփրիթ»ը: Այս կենդանի գծանկարը կը ներկայացնէ Ամերիկայի դաշտերուն մէջ սանձարձակ պտտող գեղեցիկ եւ քաջ ձի մը՝ Սփրիթը: Անոր ազատ եւ ուրախ կեանքը փոփոխութիւններու կ'ենթարկուի, երբ ան կը հանդիպի մարդոց: Տիագիի այս արտադրութիւնը եւս կը հետեւի իր նախորդներուն եւ ժապաւէնը բնականաբար կ'ունենայ ուրախ աւարտ: Նշենք, որ կենդանի գծանկարին հերոսներուն իրենց ձայները տուած են Մէջ Տէյմըն, ձէյմը Քրոմուէլը եւ Տէնիլը Սթաուի:

Այս շաբաթ նաեւ կը ցուցադրուի երկրպագուական «Ալ լամպի» ժապաւէնը:



«Տը սուիթսթ Թինկ» ժապաւէնին հերոսուհիները

ՄԵՐ ԿԱՐԾԻՔԸ

- «ՍՓՐԻԹ» (Փլանք / Ապրիլ, 2001, Թիւրքի, Ենթորտ, Ֆրիուէյ)
- «ԱԼ ԼԱՄՊԻ» (Ամփիր / Կալաքսի, Լաւ Սալիմաս)
- «ՊԻԿ ՏԵԹ ԼԱՅԸՐ» (Փլանք / Ապրիլ, 2001, Թիւրքի, Ենթորտ, Ֆրիուէյ)
- «ՏԵ ՍՈՒԻԹՍԹ ԹԻՆԿ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սոֆիլ, Սեմ Էլի, Սոտեթ, Սեպտեմբեր 2001, Լաւ Սալիմաս, Կալաքսի, Սթարկէյթ)
- «Օ» (Եսփաս, Ամփիր / Սոտեթ, Սեպտեմբեր 2001, Լաւ Սալիմաս, Կալաքսի)
- «ՏԵ ԵՍԻՏԵՆԹԸԼ ՍՓԱՅ» (Փլանք / Ապրիլ, 2001, Թիւրքի, Ենթորտ, Ֆրիուէյ)
- «ՈՒԻՏԵՆԹԸԸԸԸԸ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սոֆիլ, Սեմ Էլի, Սոտեթ, Սեպտեմբեր 2001)
- «ՇԵԼՓ, ԱՅՍ Ե ՖԻՇ» (Ամփիր / Տիւն, Սոտեթ, Սեպտեմբեր 2001, Լաւ Սալիմաս, Կալաքսի)
- «ԻՆԱՅ» (Եսփաս, Ամփիր/Սոտեթ, Սեմ Էլի, Սոտեթ, Սեպտեմբեր 2001, Լաւ Սալիմաս, Սթարկէյթ)
- «ՍԵՆՏԻՆ ՏՈՒ» (Փլանք/2001, Ապրիլ, 2001, Ենթորտ, Ֆրիուէյ)
- «ՏԻԸՍՏՆ ՈՒՅԵԼ» (Փլանք/2001, Ապրիլ, 2001, Ենթորտ, Ֆրիուէյ)
- «ՍՄՍ ԱՅ ՕԼ ՖԻՏԸ» (Փլանք / Ապրիլ, 2001, Ենթորտ, Ֆրիուէյ, Թիւրքի-Ամփիր / Սոֆիլ)
- «ՆԵՇԻՏԸՆԹ ԻՎԸԼ» (Փլանք / Ապրիլ, 2001, Ենթորտ, 2001)
- «ԱՆՏԵՅՅՅՅՅՅՅՅ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սոտեթ, Սեպտեմբեր 2001, Լաւ Սալիմաս, Կալաքսի, Սթարկէյթ)
- «ՈՒԹԸՆԹ ԹՈՒ ՆԵՇԸՐԸԼԸՏ» (Փլանք / Ապրիլ, 2001, Ենթորտ, Ֆրիուէյ, 2001)
- «ՊԵՅՏ - 2» (Փլանք / Ապրիլ, 2001, Ենթորտ, Ամպաստ, Ֆրիուէյ, Փլաք)
- «ՍԵՆ ԻՆ ՊԵՅՏ - 2» (Ամփիր/Սոտեթ, Կալաքսի)
- «ՊԵՆՏԻՅՅ» (Փլանք/Ապրիլ, 2001, Ենթորտ)

●●●●●Գերազանց ●●●Շատ լաւ ●●●Լաւ ●●Միջակ ●Չենք յանձնարարել □Չենք դիտած

ՇԱՐժԱՊԱՏԿԵՐԻ ՍՐԱՀՆԵՐԸՆԻ ԼԵՆԱՍԿԱՆԻ ԹԻԻԵՐԸ

Փոստ. 09/212516 - Սոտեթ. 01/616707 - Տիւն. 01/792123 - Սոֆիլ. 01/328806 - Բնօրրտ. 01/738439 - Ամպաստ. 09/226010 - Ֆրիուէյ. 01/485590 - Ապրիլ. 01/292192 - Քալաքսի. 09/125033 - 2001. 09/221363 - Սթարկէյթ. 08/813901 - Սեմ Էլի. 04/443992

Ռուս Վերակառուցողներ

ԾՈՎԱՆԿԱՐԻՉԸ

ՌՈՒՍԵՐԸ ԻՐԵՆՑ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԵԿԱՏԵՆ ԱՅՎԱՋՈՎԱՔԻԻ ԱՐՈՒԵՍԸ: «ՄՈՍԿՈ ԹԱՅԱՋ» ԲԵՆԱԿԱՆ ՅՕՂՈՒՄՈՎ ՄԸ ԿՈՂԵՎՈՉԷ ԸԱՅԱՋԳԻ ԳԵՂԱՆԿԱՐԻՉԻՆ ԵՆՆԴԵԱՆ 185ԱՄԵԱԿԸ

Աշխարհի գեղանկարչության մեծ վարպետներուն շարքին դասուող ծովանկարիչ Յոզիաննէս Այվա-պովսքիի ծննդեան 185ամեակին առիթով 17 Օգոստոսին, «Մոսկո Թայմս» թերթին մէջ լոյս տեսաւ յօդուած մը, որ հայ մշակոյթին պարծանքը նկատուող գեղանկարիչ Այվապովսքիին կը ներկայացնէ իբրեւ բացառապէս ռուսական մշակոյթին պատկանող արւեստագէտ: Յօդուածագիրը հասկի հպանցիկ ակնարկով փր կը նշէ անոր մականունին հայկական ծագումը (Այվապէան), կը նախընտրէ բնաւ չյիշել անոր հայերէն անունը եւ կը յիշատակէ միայն ռուսական անունը՝ Իվան:

Հայաստանի Այգային Պատկերասրահի տնօրէն Շահէն Սաչատրեան հայ գեղանկարիչներու նուիրուած www.armsite.com կայքին մէջ կը գրէ. «Անկարելի է ըմբռնել 19րդ դարու հայկական գեղանկարչութիւնը պանց առնելով Այվապովսքիին: Նոյնպէս անկարելի է անտեսել անոր հայկական արմատները եւ պայն համարել ռուս արուեստագէտ: Այսօր մեծ ծովանկարիչին արուեստը կը նկատուի ռուսական եւ հայկական մշակոյթներուն սերտ կապին ամէնէն գեղեցիկ օրինակը»:

Խաչատրեան մանրամասնօրէն կը վերլուծէ Այվապովսքիի արուեստին հայկականութիւնը: Ան կը նշէ, թէ ծովանկարիչը բազմաթիւ պատատներ ստորագրած է Յոզիաննէս Այվապովսքիին: «Այվապովսքիի ստեղծագործական աշխատանքին մէջ կարելի է գտնել հայ մշակոյթի եւ ազգային պարունակներու այնպիսի երեւոյթներ, որ անկարելի է անոր արուեստը անջատել այն ժողովուրդէն, որուն կը պատկանի: «Միտքարեան եղբայրներ Ս. Ղապար կղզիի վրայ» գեղանկարին մէջ կղզին կը նմանի արեւմտի պահուստի պատկերում նաւու, եւ կը թուի, թէ մարդիկ յոյսի եւ երապի ճամբորդներ են, կը գրէ ան, շեշտելով, որ Այվապովսքիի պատատներուն մէջ միշտ շեշտաւորուած է յոյսը՝ իբրեւ կեանքի, յոյսի եւ հաւատքի յաւիտենական խորհրդանշան: «Անկախ արարիչին յոյսն է, որուն գաղափարը ինք արմատներ ունի հայկական մշակոյթին մէջ եւ շարունակուած է հայ գեղանկարիչներու արուեստին մէջ: Այվապովսքի լիստ էր, թէ միջնադարեան քանադեղծներին ինչպէ՛ս կը փառաբանէին հայկական եկեղեցիներուն յոյսը», կը գրէ Սաչատրեան:

Ի տարբերութիւն յօդուածագիրին այն կարծիքին, թէ Այվապովսքի քաղաքականութեան հեռու արուեստագէտ մըն էր, Սաչատրեան կը բացատրէ, թէ ան յունական պատմագրական պայքարի շարժումէն ներշնչուած պատկերած է պայն, նմանօրինակ ապագայ մը ցանկալով իր ժողովուրդին:

«Ան իր ժողովուրդին փրկութիւնը կը տեսնէր այն ժողովուրդին մէջ, որուն հոգեպաւակը դարձած էր,- կը գրէ Սաչատրեան, ակնարկելով ռուսներուն: Ռուսական նաւատորմին յաղթանակը ընդդէմ թուրքերուն կը ներշնչէր այն յոյսը, թէ փրկութիւնը կարելի էր»:

Համիտեան 1895ի ջարդերէն ետք Այվապովսքի խրիմեան հայրիկին ուղղուած նամակի մը մէջ գրած է. «Միտքս լեցուն է վիշտով, մեր դժբախտ ժողովուրդին համար, այս ողբերգական եւ անսխալութեամբ ջարդին համար»: Չարդերէն ետք Այվապովսքի ծովը նետած է սուլթանին կողմէ տարիներ անաջ իրեն տրուած շքանշանը: Այնուհետեւ ան գծած է ցուցադրած է ջարդերը պատկերող պատատներ:

Թէոդոսիոյ մէջ Այվապովսքիի տունը հայ արուեստագէտներու ժամադրաժամը էր, կը գրէ Սաչատրեան: «Հոն է, որ սկիզբ առաւ Բաշինջաղեանի, Սուրէնեանի, Մախոխեանի եւ Չապանեանի նման արուեստագէտներու ստեղծագործական կեանքը: Այվապովսքիի երապն էր ստեղծել հայ արուեստագէտներու միութիւնը»:

Այվապովսքի բազմաթիւ պատատներ գծած է հայկական նիւթերով, պատկերելով թիֆլիսի, Աեւասայ լիճի եւ Արարատ լեռան շուրջ պարուած կեանքը, ինչպէս նաեւ դրուագներ հայկական հնադարեան պատմութեան, ժողովրդականացնելով հայկական արուեստի այս սերը:

Իր փափաքին համաձայն, Այվապովսքի թաղուած է Թէոդոսիոյ հայկական Ս. Սարգիս եկեղեցիին մէջ: Անոր տապանաքարին վրայ արձանագրուած է խորհրդանշանը տող մը, որուն գաղափարը հետեւեալն է. մահկանացու ծնած՝ ան ձգեց անմահ յուշեր:

Քովի սիւնակներով թարգմանաբար կու տանք «Մոսկո Թայմս» թերթին մէջ լոյս տեսած յօդուածը:



«Անկարելի է ըմբռնել 19րդ դարու հայկական գեղանկարչութիւնը զանց առնելով Այվապովսքիին: Նոյնպէս անկարելի է անտեսել անոր հայկական արմատները եւ զայն համարել ռուս արուեստագէտ: Այսօր մեծ ծովանկարիչին արուեստը կը նկատուի ռուսական եւ հայկական մշակոյթներուն սերտ կապին ամէնէն գեղեցիկ օրինակը»:

Շահէն Սաչատրեան

Ռուսիոյ մէջ Իվան Այվապովսքիի ծննդեան 185ամեակը նշուեցաւ 29 Յուլիսին: Ռուսիոյ մէջ գրեթէ ամէն ոք ծանօթ է այս փայլուն ծովանկարիչին անունին: Այսուհանդերձ, ասիկա չի նշանակեր, թէ Այվապովսքիի բազմաթիւ գործերուն (աւելի քան 6000 գեղանկար) եւ բեղուն գեղանկարչին նկատմամբ կարծիքները երկդիմի չեն: Այվապովսքիի ասպարէզը կը տարածուի 19րդ դարու մեծ մասին վրայ եւ այս վիթխարի դարձ կ'արտացոլացնէ յատուկ ձեւով: Ան աշխատած է աւելի քան 65 տարի, որուն ընթացքին հանրութեան եւ ակադեմիայի մեքերու կարծիքները փոխուած են անոր նկատմամբ, թէ եւ այս արուեստագէտին կեանքէն անբաժան եղած է աւանդական չափանիշներով յաջողութիւնը: Երեւոյթ մը, որ սուր կերպով կը հակադրուի բազմաթիւ այն



«Նոյ կ'իջնէ Արարատն» (1889)

գեղանկարիչներուն, որոնք իրենց ողջութեան անտեսուած են եւ աղքատութեան մէջ ապրած, սակայն յետ մահու հռչակի արժանացած են:

Այվապովսքիի ծննդավայրը յատուկ նշանակութիւն պիտի ունենար անոր պապայ ասպարէզին մէջ: Իրօք, ան ծնած է Թէոդոսիա, ինչպէս նաեւ Թէոդոսիոյ թանգարանին մէջ անոր գործերուն մեծ մասը կը գտնուին օտար երկրի մը՝ Ուքրանիոյ մէջ: Պատանի Այվապովսքիին տաղանդաւոր գծանկարները գրաւած են թէոդոսիացի ճարտարապետի մը ուշադրութիւնը, եւ ան ուղարկուած է Միտֆերոֆովի երկրորդական մէկ վարժարանը: Ապա Այվապովսքի յաճախած է Ս. Փեթերսպուրկի Արուեստներու Ակադեմիան, ուր ստացած է կրթանպատ: Այնպիսի փայլուն ուսանող եղած է, որ երկու տարիով կրճատուած է անոր ուսման ժամանակաշրջանը:

Այվապովսքի 1835ին հանրութեան ներկայացուցած է իր առաջին գործը, որ կը կրէր «Մովսէս վերել օդի ուսումնասիրութիւն» վերնագիրը: Անիկա անմիջապէս յաջողութիւն արձանագրած է եւ արժաժէք քանչեւ արժանացած է Այսպէս, տակաւին 20 տարեկան չեղած Այվապովսքի դարձած է հռչակաւոր ծովանկարիչ: Գեղանկարչութեան այս սեռը ընտրելէն ետք ան ետդարձ չէ կատարած եւ չէ մոլորած:

Այս արուեստագէտը յաճախակի ճամբորդութիւններ կը կատարէր դէպի Սեւ Ծով եւ Ֆինլանտայի ծոցը: Ան մասնակցած է ծովանկարչի Լազարեւի, Քորնիլովի եւ Նախիմովի

ծովագնացութիւններուն: Սակայն ծովանկարներ կարելի չէ գծել կեանքէն մեկնելով: Այվապովսքիի ամէնէն յատուկ նշանակաւոր արժանիքը տեսողական զարմանահրաշ յիշողութիւնն է, որ առիթ կու տար վերարտադրելու ծովային բնաշխարհի մէջ մասնայատուկ երեւոյթներ:


Այվապովսքիի յաջողութիւնը չէր սահմանափակուած Ռուսական կայսրութեան մէջ: 1840ին ան ճամբորդած է Իտալիա, ուր ռուս արուեստագէտներ կ'երթային սորվելու իտալական արուեստը: Պարզապէս բան մը սորվելէ անդին գնաց Այվապովսքի եւ մեծ ժողովրդականութիւն վայելեց այն երկրին մէջ, որ աշխարհին տուած էր մեծագոյն գեղանկարիչները: Իտալիոյ մէջ իւրաքանչիւր վաճառատուն կը ծախէր ա լա Այվապովսքի ծովանկարներու վերարտադրութիւնները:

Այվապովսքի 1843ին ճամբորդած է Փարիզ, Ամսթերամ եւ Լոնտոն, ուր ցուցադրած է իր գործերը: Մարդիկ ամէն տեղ զայն ողջունած են իբրեւ իր ժամանակներու մեծագոյն ծովանկարիչը: Անդլիացի արուեստագէտ Ժոզէֆ Թըռնըր, որ ինքնին ծովանկարիչ էր, բանաստեղծութիւն մը գրած է ի պատիւ Այվապովսքիի:

Իր ասպարէզին սկզբնաւորութեան Այվապովսքի ներշնչուած է վիպապաշտ դպրոցէն, որ այդ ժամանակներու արուեստներուն մէջ դեր ըլլաող ոճն էր: Անոր արուեստը շատ կը յիշեցնէ պատմական եւ կրօնական նիւթերով պատառներ գծող գեղանկարիչ Քարլ Պրայուլովի գործերը: Պրայուլովի ամէնէն հռչակաւոր գեղանկարը «Փոփէյի վերջին օր»ն է, որուն վերարտադրութիւնները վերջերս ցուցադրուեցան Մոսկուայի ծանուցումի տարածակներու վրայ, շտապ կացութիւններու նախարարութեան կողմէ: Երկու արուեստագէտները մեծ ժողովրդականութիւն կը վայելին իրենց ժամանակներու, սակայն զանոնք ընկալելը համեմատաբար դժուարացաւ յաջորդ դարերուն, երբ վիպապաշտ ոճը մոռցուեցաւ:

Որոշ դիտանկիւնէ Այվապովսքի գեղանկարիչ չէր, այլ ծովու լուսանկարիչ: Անոր գործերը կորսնցուցին իրենց իւրայատուկ ճամբը, երբ գունաւոր լուսանկարները սկսան աւելի իրապաշտ եւ գեղեցիկ կերպով վերարտադրել ծովը: Սակայն Այվապովսքիի պատառները իրենց ժամանակներուն կ'ընձեռէին ճիշդ այն, ինչ որ արուեստի գործեր հաւաքողներ կամ պարզապէս հարուստներ կ'ուզէին կախել իրենց բնակարաններուն մէջ: Այվապովսքի շատով հարստութիւն մը դիզեց վաճառելով իր բազմաթիւ գեղանկարները: Ուրիշ ինչ յաջողութիւն անհրաժեշտ էր հաստատելու համար անոր տաղանդը:

Այսուհանդերձ, 1860ական եւ 1870ական տարիներուն Այվապովսքի սկսաւ քննադատուելի աւելի խստապահանջ ակնդիրներու կողմէ: Մեծ գրագէտ Տոսթոյեւսքի Այվապովսքիին բաղդատեց Ալեքսանտր Տիւմայի չես. «Երկուքին գործերը ստեղծուած են արտասովոր տպաւորութիւններ առթելու նպատակով, որովհետեւ անոնք սովորական բաներ չեն պատկերեր եւ կ'առնեն սովորական բաները»: Տոսթոյեւսքի արուեստագէտները կը մղէր իրենց ուշադրութիւնը կեղծոյցներու սովորական եւ առօրեայ կեանքի երեւոյթներու վրայ: Քննադատներ նաեւ կը մատնանշէին Այվապովսքիի գեղանկարչական մօտեցումը եւ անոր ուշացած վիպապաշտութիւնը: Ընդհանրապէս աւելի ուսած խաւը այս արուեստագէտին նկատմամբ ունէր հեղինակաւոր հեղինական կեցւածք, որ կ'արտացոլար տարբեր արտայայտութիւններու մէջ, ինչպէս՝ «Այվապովսքիի վրձիններ արժանի տեսարան մը»:



«Փոթորիկը» (1872) - Կիլիկիա թանգարան

Այվապովսքի Թէոդոսիա վերադարձաւ 1845ին, Ան գծեց Աստուածաշունչի նիւթերով բազմաթիւ պատառներ, ինչպէս «Ջրհեղեղը» եւ «Արարչագործութիւնը»: Ան մեծ կարեւորութիւն չէր ընձայն իր քննադատներուն եւ կ'արտադրէր Ռուսիոյ նաւատորմին յաղթա-

նակները պանծացնող գեղանկարներ: Երբ ծայր տուաւ 1877էն 1878ի ռուս-թրքական պատերազմը, ան շարք մը գեղանկարներ արտադրեց այս նիւթով: Անշուշտ ասիկա չօգնեց, որ Այվապովսքի սիրելի դառնար այդ օրերու արմատականներուն համար:

Այվապովսքիի ժողովրդականութիւնը դարձեալ բարձրացաւ 1880ական տարիներուն Նոր վիպապաշտութեան գալուստով: Վարպետը շարունակեց աշխատիլ: Ան գծեց դրուագներ Քրիստափոր Քոլումպոսի կեանքէն: Պարբերաբար փորձեց գծել ծովանկարներէ տարբեր գեղանկարներ: Գծեց իր գիւղաւանէն պատկերներ, ձմեռնային տեսարաններ, եւ այլն: Սակայն անոնցմէ ոչ մէկը մեծ յաջողութիւն արձանագրեց: Իրականութեան մէջ ոմանք անվիճելիօրէն ապարդիւն գործեր էին:

Այվապովսքի մինչեւ իր մահը հաւատարիմ մնաց ծովուն: Ան մահացաւ 19 Ապրիլ 1900ին, անաւարտ ձգելով իր «Թրքական նաւու մը




«Սեւ Ծով» (1881) - Թրթիաթով թանգարան

պայթումը» գեղանկարը: Այվապովսքիի բոլոր գեղանկարներուն մէջ առանձին տեղ կը գրուէ «Իններորդ ալիբը» գեղանկարը (1850): Անիկա կը պատկերէ խորտակուած նաւու մը վերապրողները, որոնք փաթեթուած են կտորած կամի մը, որ կը դիմադրուէ հարուածի մը վտանգը. նոյնիսկ կը թուի, թէ վիթխարի ալիք մը զանոնք դէպի մահ պիտի քշէ: Ասիկա գեղանկարիչին վիպապաշտ ժամանակաշրջանի գործերուն գագաթնակէտը կը կարգէ: Աւելի ուշ ան վիպապաշտութեան նշանացած է իրապաշտութեան:

Հաւանաբար Այվապովսքիի արուեստին ամէնէն ուշագրաւ յատկանիշը կը կայանայ բազմաթիւ եւ տարբեր մարդոց ճաշակին գոհացում տալու մէջ: Անոր գործերը քաղաքական ոչինչ կը պարունակեն: Այսուհանդերձ ցարական եւ խորհրդային վարչակարգերը խանդավառութեամբ ընդունած են զայն իր բեւ իրենց պատկանող արուեստագէտը: Այվապովսքիի միայն եւրոպական հռչակը նկատուելի անկում արձանագրած է 20րդ դարուն: Իվան Այվապովսքի ապրած է այնպիսի ժամանակներու, երբ գեղանկարչութիւնը յեղաշրջում մը ապրեցաւ տպաւորապաշտ եւ այլ ուղղութիւններու յայտնութեամբ: Սակայն այդ ճակատագրական զարգացումները որեւէ ազդեցութիւն չգործեցին արուեստագէտին վրայ:

Թերեւս այս վճռականութիւնը եւ փոփոխութեան նկատմամբ անդրդուելի կեցուածքը արժանի են յարգանքի: Ամէն պարագայի Այվապովսքի միշտ մաս պիտի կազմէ ռուսական



«Փոթորիկը» (1872) - Կիլիկիա թանգարան

գեղարուեստական ժառանգութեան: Արուեստագէտ եւ հանրային դէմք Իվան Քրամոյս, որ ժամանակին Այվապովսքիի վիպապաշտութեան հակառակորդներէն էր, հետեւեալը գրած է Այվապովսքիի ուշ շրջանի գործերէն՝ «Սեւ Ծովը» (1881) գեղանկարին մասին. «Նկարին մէջ ոչինչ կայ, բացի երկինքէ եւ ջուրէ, սակայն ջուրը անսահման

ովկիանոսն է, ոչ թէ փոթորկած, այլ՝ երբեք, կատաղի, անծայրածիր, իսկ երկինքը նոյնիսկ աւելի անծայր, եթէ կարելի է: Ասիկա ամէնէն հզօր գեղանկարներէն է, որ երբեւից տեսած եմ»:

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

ՇԱՐՈՒՄՈՒՍԿԵՐԻ ԱՇԽԱՐՀԵՆ...

Շարունակում 6րդ էջը

առիական ժապավենները: Փաստորեն, քառորդ դար է Վեր փառատունին յայտագրերի մեջ միշտ ներկայ եղած են հնդկական եւ ճապոնական ժապավենները: Այս իմաստով այս տարի առաջին անգամ ըլլալով չինական ժապավեն մրցույթի ներկայանալ

տաղրութիւններ: 24 Օգոստոսին ցուցադրուեցան Վահէ Պապայեանի «Էֆթըր ֆրիտը» եւ Տէյ-Վիտ Սաֆարեանի «Օրոր» ժապավենները: «Էֆթըր ֆրիտը» 88 վայրկեան տեւողութեամբ եւ 2001ի արտադրութիւն եղող ժապավեն մըն է, որ կը ներկայացնէ Միացեալ Նահանգներ հաստատուած հայ ընտանիքի մը կեանքը: Ժապավենին հերոսը չափահաս մարդ մըն է, որ իր ինքնուրոշեան փնտրուող կը կատարէ՝ միաժամանակ պարտական զգալով անոնց, որոնք զինք

նոր աշխարհ հասցուցած են: «Էֆթըր ֆրիտը» մէջ դերեր ստանձնած են Միք Թոմըսի, Սոֆի Շահինեան, Կրեկ Սաթամեան, Շանթ Պեճանեան, Անահիտ Շահրիկ եւ ուրիշներ: Տէյվիտ Սաֆարեանի «Օրոր»ը վաւերագրական շատ կարճ ժապավեն մըն է (տեւողութիւն՝ չորս վայրկեան, 2002ի արտադրութիւն) եւ նուիրուած է աշխարհի տարբեր կողմերը տեղի ինքնուրոշող պատերազմները կը կատարէ՝ միաժամանակ պարտական զգալով անոնց, որոնք զինք

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՒՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ՌԱՇԱՆԱՅԻ ԵՐԿԻՆՔԻՆ ՏԱԿ ՀԻՆԳ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԵՐ ՍԿՍԱՆ ԻՐԵՆՅ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

27 Օգոստոսին 7 Սեպտեմբերին տեղի կ'ունենայ Ռաշանայի Քանդակագործութեան Միջազգային 9րդ համագումարը: Լիբանանցի նշանաւոր քանդակագործ Պասպուս եղբայրներուն հայրենի գիւղը ամէն տարի այս համագումարին առիթով կը հիւրընկալէ լիբանանցի եւ օտար քանդակագործներ: Սակայն այս տարի առաջին անգամ ըլլալով անոնց խումբին մաս չի կապմեր լիբանանցի քանդակագործ մը:



Սլֆրէտ Պասպուսի պարտէպին մէջ արուեստի գործերու վերածնունդ կրաքարի կտորները համագումարին արտօնի պիտի միանան Ռաշանայի բացօթեայ թանգարանին մէջ նախորդ տարիներէն տեղադրուած 55 քանդակներուն: «Իւրաքանչիւր համագումարին արտօնի նմանօրինակ փորձառութիւն կ'ապրին: Գործերէն մէկը ետիս ձգելով կը կ'զգան, որ պատկերներէն մէկը կը լքեն», կ'ըսէ պասպուսի անուար քանդակագործ Մարիանո Անտրէս Վիլլեյա: Համագումարին կը մասնակցին նաեւ բրիտանացի Քէյթ համագումարը քանդակներու մասին խորհուրդներուն կու տայ ռաֆիկն:

Համագումարին տարբեր ունեւորները Սպանիայէն, Մեծն Բրիտանիայէն, Ֆրանսայէն, Ճապոնէն եւ Իտալիայէն ժամանած հինգ արուեստագետներ բաց երկինքին տակ ձեռն ձեռն պիտի տան ժայռի պատկերներուն: Աւելի քան 150 թեկնածուներու մէջէն միայն հինգ արուեստագետ ընտրած այս համագումարին կապմակերպիչ եւ նախագահ Սլֆրէտ Պասպուսի համաձայն, այս երկու յոյժը ցուցանիչ է, թէ համագումարը քանակէն աւելի նախընտրութիւն կու տայ ռաֆիկն:

ՍԱԿԱՐԱՆ	
Պէլյուրի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագինները հետեւեալներն են:	
Սուրիական թղթուկի	31,40 - 33,50 լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00 լ.ն.
Քուէթեան տինար	4953,41 - 4957,42 լ.ն.
Յորդանանեան տինար	2124,41 - 2128,42 լ.ն.
Պահրէյնեան տինար	3995,00 - 4000,00 լ.ն.
Ա. Մ. Էմիրութեան տինար	408,41 - 412,42 լ.ն.
Քաթարեան ռիալ	412,16 - 416,15 լ.ն.
Սէուտական ռիալ	399,88 - 403,99 լ.ն.
Օմանեան ռիալ	3900,00 - 3930,00 լ.ն.
Եգիպտական կիւնէ	321,71 - 325,72 լ.ն.
Անգլիական սթըրլին	2301,65 - 2305,11 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1000,25 - 1004,52 լ.ն.
Թրքական լիրա	3,61 - 3,64 լ.ն.
Կիպրական փաունտ	2567,10 - 2569,17 լ.ն.
Ճափոնական հապար Եէն	12,65 - 12,70 լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	2450 - 2451 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00 լ.ն.
Քանադական տոլար	965,50 - 969,85 լ.ն.
Աւստրալիական տոլար	815,95 - 819,70 լ.ն.
Եւրո	1474,16 - 1470,90 լ.ն.
● ՈՍԿԻ	
Անգլիական մէկ ոսկի	115,000 - 125,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	108,500 - 118,500 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	95,500 - 105,500 լ.ն.
Մեքսիքական փէսոս	569,500 - 589,500 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	15,000,000 - 15,500,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	304,68 - 308,72 \$
Մէկ օնս արծաթ	4,41 - 4,45 \$
● Ամերիկեան տոլարի փոխանակման սակարբեր:	
Եւրո	0,9844
Քանադական տոլար	1,5575
Չուիցերիական ֆրանք	1,4929
Ճափոնական Եէն	117,85
Մէկ սթըրլին	1,5415
● ՍՈՒԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ	
Գիճի Ա. ճշդում Գիճի Բ. ճշդում	
Ա. կարգի	4 4/8 4 4/8
Բ. կարգի	4 6/8 5
Բաժնետիր	

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԺՈՋԷՖ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 1 Սեպտեմբեր 2002, Պուրճ Լամուտի Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցու մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

ՎԱԶԳԵՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ մահուան քառասունըօրեան համաձայն ՄԵԼԻՔԵԱՆԻ գերդաստանի Անճեղեղեան Գերմանական Կիրակի, 1 Սեպտեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԼՈՒՍԻՆ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 1 Սեպտեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՅՆՆԱՐ ԱՅՆՆԱՐ ԱՆԻ ՀԱՆԱԹԵԱՆԻ (ծնեալ՝ ՄԱՆԱՇԱՆԵԱՆ) մահուան քառասունըօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 1 Սեպտեմբեր 2002, Այնճարի Ս. Պողոս եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍԱՐԳՍ ՊԵՏՐՈՍ ՍՐԱՊԵԱՆԻ մահուան քառասունըօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 1 Սեպտեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՅՆՆԱՐ ԱՅՆՆԱՐ ԼՈՒՍԻՆ ՍԵՆԱՊԵԱՆԻ մահուան Դ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 1 Սեպտեմբեր 2002, Այնճարի Ս. Պողոս եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ) Պիտի կարեւոր խոնակ ու շփոթ հարց մը լուծել, ձեր շրջանակը դուրս բերելով անյարմար վիճակէն, որուն պատճառը՝ անորոշ է:

☆ **ՅՈՒԻ** (21 Ապրիլէն 21 Մայիս) Պիտի օգտուիք անակնկալ բախտով մը. պիտի ստանաք կարելու գումար մը, որուն պատճառը ձեզի համար ալ անբացատրելի է: Կարելուը շահն է:

☆ **ԵՐԿՈՒՐԵԱՆ** (22 Մայիսէն 21 Յունիս) Պիտի ունենաք հաղորդակցելու սքանչելի տրամադրութիւն, բոլորը զարմացնելով, թէ ուրկէ՞ է ձեր այսքան ժողովրդակառնութիւնը: Շատեր պիտի փափաքին ձեզի նմանիլ:

☆ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս) Թեբել անկում մը տրամադրութեան, բայց միջնաճակատը այս անորոշութիւնը պիտի չքանցայ: Օրը ունի հարցեր, բայց զանոնք թեբելի առեք:

☆ **ԱՌԻԻՄ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Հանելի երեկոյթի մը ընթացքին պիտի հանդիպիք բարեկամներու, զորս թիչ անգամ կը տեսնէք: Կեանքը առեք այնպէս ինչպէս որ է:

☆ **ԿՈՅՄ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Ձեր սպարեզին գործերը կը դանդաղին, ու սակայն կ'ազդէ ձեր շիջելուն: Համբերութեամբ կրնաք միայն հանդարտեցնել ձեր միտքը: Շատ մի ջղայնանաք:

☆ **ԿՇԻՌԻ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Ձեր ծրագիրները կը զարգանան, ու սակայն պիտի բարձրացնէ ձեր ետնդը: Շարունակեցէք աշխատիլ նոյն թափով, որպէսզի հասնիք ձեր նպատակին:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Ձեր ճիգերը կեղծանցուցէք տնտեսական ձեր վիճակը բարելաւելու: Օրը կ'օգնէ ձեզի:

☆ **ԱՂԵՂՆԱԻՆՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Եթէ թիրմացութիւն մը ստեղծուած է ամուսնական ձեր կեանքին մէջ, երկխօսութիւն մը կատարեցէք: Զիրար հասկնալու միակ ձեւը իրարու հետ խօսելով գիրար հասկնալու է:

☆ **ԱՅԾԵՂՋԻԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Ձեր շուրջի ծածկամտութիւնը կը ջղայնացնէ ձեզ: Ու սակայն պիտի հասկնէք ձեր գործակիցներուն: Վերջին հաշուով ծածկամտութիւնը լաւ բնաւորութիւն չէ: Ան գաղտնապահութեան հակառակ է:

☆ **ԾՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ) Անճի մը հետ անյարմար վայրի մէջ պիտի ունենաք հանդիպում մը: Այս մասին շատ հարցումներ մի ուղղեք, հարցը առեք այնպէս ինչպէս որ է:

☆ **ՉՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ) Ձեր ընտանիքին անգամները այս օրերուն կը բացակային ձեր քովէն, եւ դուք կը նեղուիք սուր համար: Համբերեցէք, շուտով կը միանաք:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5235

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ										
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ԸՆԴՈՒՆԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵԱՆ
1. Իզական պատուանդան:	1. Որոշ ուղղութեամբ ընթացող շարժում - Յորենի կեղեկ:
2. Երբեմն կապուտան ծով կոչուած լիւն - Հայ նահապետ:	2. Գիւղաքաղաք - Մուռ ակոսայ - Կրկնուած ձայնաւորներ:
3. Լէշ - Վեհանոյշ Թեքեանի երկերէն:	3. Վայրի բաղ - Զինկախառն պղինձ:
4. Յուցական դերանուն - Դրամ:	4. Լեբան շուք մասը - Կախարդ:
5. Աստուած:	5. Վարձուած մարդասպան - Նմանաձայն տառեր:
6. Չայնակից տառեր - Օտար սրբուհի:	6. Լեզուով մը՝ այն՝ - Իւր - Իզական օտար անուն:
7. Վիշնու աստուծոյ եօթներորդ մարմնացումը - Կարմրամիս ձուկ:	7. Նիւարնայ - Դրկից գիրեր:
8. Արքունական զգեստ - Իրերայաջորդ գիրեր:	8. Ապացոյց - Որփայի եւ Հոուիթի կետեր:
9. Հոլովակներ մասնիկ - Սերտ:	9. Հայ աշխարհակալ:
10. Առաջին նաւապետը - Ետագագ:	10. Դատիկոն - Կիսեփ:
11. Հոսող - Մանելիք:	11. Շաղէ՛ - Լոյս երկրեկող ապակի:

ԹԻԻ 5234

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	Մ	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
2	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
3	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս



ՀԵՌԱՏԵՍԻԼ

ԹԵ. ԷԼ.	ՄՈՒՍԹԱՔՊԱԼ	11:00.
10:00. Սապահո	7:00. Լուրեր	11:20. Ռուբիկոն +
12:30. Միւլիք	8:30. Այս	12:00. Լուր
	այ սապահ	12:05. Top 10
13:00. Մարու հանս	13:00. Յիշ ինժո	13:00. Լուր
14:00. Ենրոնիուկ	13:05. Նոյս լէնտիկ	13:05. Top 10
14:30. Լուրեր	14:00. Անգլերէնով	13:55. Նոքստետր
15:00. Մըշուար	լուրեր	14:00. Լուր
17:00. Պէս սելըր	14:20. Յրանսերէնով	14:05. Top 10
18:00. Շըրի Հոյմ	լուրեր	15:00. Հայլուր
18:30. Արաքական	14:40. Հայերէնով	15:20. Մուլտֆիլմեր
ֆիլմաշար	լուրեր	«Քաղաքի մուկը եւ
19:30. Արաք. լուրեր	15:30. Արաքական	դաշտային մուկը»
20:00. Տեղական	ֆիլմաշար	«Զգուշացէք,
ֆիլմաշար	16:30. Թելեթապիկ	կապիկներ են»
22:00. Տեղական	17:00. Ըզդար ըզպար	16:00. Հեռուստատեսիայ
ֆիլմաշար	17:30. Արաքական	«Սիրոյ կախարդանք»
23:00. Ամերիկեան	ֆիլմաշար	17:00. Երեկոյեան
ֆիլմաշար	18:30. Միւլիքանս	Երեւան
	20:00. Արաքերէն լուրեր	17:20. Միտադի տուն
	20:30. Ռուսում	18:10. Այլուր
	Մուրախարիբա	18:20. Եկեղեցական
	մէլիոն	կեանք
	20:32. Ման սաեարպահ	18:35. Տուն-տունիկ
	21:30. Ամերիկեան	19:00. Հայլուր
	ժապաւէն	19:50. Ռուկի նշան
		20:00. Երկար
		ժապաւէն՝
		«Անիծուածները»
		20:25. «Ում է ժպտում
		կանքը»
		21:40. Պոէզիայի
		ակնթարթներ
		22:00. Հայլուր
		22:20. Կէս գիշերային
		ձայնաթաց
		23:20. Հայլուր
		(ռուսերէն)
		23:25. Հայլուր
		(անգլերէն)
		23:30. Երեկոյեան
		Երեւան
		23:45. Այլուր
		00:00. Լուր
		0

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՊԱՏԵԹՊՈՒԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ, ԻՆՏԻԱՆԱՓՈՒՆ

ԼԻԲԱՆԱՆ ԶԴԻՄԱՅԱԻ ՀԶՕՐ ՊՐԱԶԻԼԻ ԴԻՄԱՅ

Երէկ, Ինտիանափոլիսի մէջ (Մ. Ն.) սկսաւ պատեթիօնը 2002ի աշխարհի ախոյեանութիւնը, որ պիտի տեւէ մինչեւ Սեպտեմբեր 8:

Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերեն տղոց 16 ազգային խումբեր, բաժնուած՝ չորս խմբակի: Այդ խումբերն են. Անկոլա, Քանադա, Սպանիա, Ենկոստրալիա (Ա. խմբակ), Պրագիլ, Լիբանան, Փորթո Ռիքո, Թուրքիա (Բ. խմբակ), Ալճերիա, Զինստան, Գերմանիա, Միացեալ Նահանգներ (Գ. խմբակ), Արժանիք, Նոր Զելանդա, Ռուսիա եւ Վենեզուելա (Դ. խմբակ):

Լիբանանի ազգային խումբը, որ երէկ իր առաջին մրցումը կատարեց Պրագիլի դէմ, 29 կէտի տարբերութեամբ պարտութիւն մը կրեց իր մրցակիցէն՝ 102-73 արդիւնքով (կիսախաղ՝ 52-33 ի նպաստ Պրագիլի):

Այսօր, նոյն ժամուն (ժամը 7:00ին), Լիբանանի ազգային խումբը կը կատարէ իր երկրորդ մրցումը. մրցակիցն է Փորթո Ռիքո. իսկ վաղը Լիբանան կը մրցի Թուրքիոյ դէմ:

Նշենք, թէ Բ. Հանգրուան Հասնող խումբերը պիտի ըլլան իւրաքանչիւր խմբակի առաջին երեք դիրքերը գրաւողները:

Երէկուան մրցումին, Պրագիլ յայտնապէս շատ զօրաւոր էր Լիբանանի համար: Մեր կազմը, որ կը մասնակցի առաջին անգամ ըլլալով այս մրցաշարքին, իրրեւ մրցակից ունէր ոչ միայն երկու անգամ աշխարհի ախոյեան Հանգրուան խումբը, այլ նաեւ՝ բոլոր ժամանակներու պատեթիօնի հակառակէն մէկը: Այսուհանդերձ, լիբանանցիք ունեցան բաւական համոզիչ խաղարկութիւն եւ վստահաբար յաջորդ մրցակիցներուն դէմ պիտի ունենան շատ աւելի լաւ Հանգրուաններ, որովհետեւ անոնք Պրագիլի նման հակառակ չեն:

Ողջունելի էր լիբանանցի համակիրներուն մեծաթիւ ներկայութիւնը թրիպլիններուն մէջ, որոնց շարքին՝ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան:

ԹԵՆԻՍ. ԵՌՆ. ԷՍ. ՕՓԸՆ

Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ

ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ԱԻՐՏԵՑԱՆ

Երէկ շարունակուեցան ԵՌ. ԷՍ. Օփընի տղոց Ա. Հանգրուանի մրցումները, որոնց ընթացքին յիշատակելի անակնկալներ շարձանագրուեցան:

Աղջկանց Բ. Հանգրուանի մրցումներուն, մեծագոյն անակնկալը յաջողեցաւ ստեղծել իտալացի Ֆրանչեսկա Սքիաւոնէ, որ դուրս ձգեց ուսուցիչին հետեւնէն:

Դուրս մնացողներուն շարքին եղաւ նաեւ Թամարին Թանասուկարն (Թայլանտ), որ պարտուեցաւ Պէտր Պիեթրին (Մ. Ն.):

Ստորեւ՝ երէկուան կարեւորագոյն մրցումներուն արդիւնքները.

- **ՏՂԱՔ (Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆ)**
- 10.- Սեպուսիան Կրոման (Ֆրանսա) - Մարք Ռոսք (Չեխիոյ) 6-1, 3-6, 6-1 եւ 6-4
- 3.- Թոմի Էլան (Գերմանիա) - Տեյվիտ Սանչէս (Սպանիա) 7-6, 3-6, 3-6, 6-4 եւ 7-5
- Աննո Քլեման (Ֆրանսա) - Սքեֆան Բուպի (Աւստրիա) 6-3, 4-6, 7-5 եւ 6-3
- 26.- Խուան Իկնասիո Շելա (Արժանիք) - Ֆելիքս Մանթիլա (Սպանիա) 6-2, 7-6 եւ 6-2
- Քարոլ Բուչչերա (Սլովակիա) - Ռոստի Սքեֆան (Չեխիա) 6-7, 6-4, 2-6, 6-2 եւ 6-1

- **ԱՂՁԻԿՆԵՐ (Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆ)**
- 11.- Տանիելա Հանգրուան (Սլովակիա) - Վերիկա Ռազան (Ֆրանսա) 6-3 եւ 6-2
- 8.- Ճասթին Հենի (Պելիքի) - Քարա Պլէյք (Չին. պապուէ) 6-3 եւ 6-2
- 24.- Իվա Մայոլի (Իտալիա) - Քարա Պլէյք Սքեֆան (Չեխիա) 6-4 եւ 6-4
- 26.- Նարալի Տըշի (Ֆրանսա) - Իրոտա Թուլիա-կանովա (Ուկրաինա) 6-1, 3-6 եւ 7-6
- Պէա Պիեթր (Մ. Ն.) - 27.- Թամարին Թանասուկարն (Թայլանտ) 6-4 եւ 6-2
- Ֆրանչեսկա Սքիաւոնէ (Իտալիա) - 12.- Էլենա Տեմենիեւա (Ռուսիա) 7-6 եւ 6-3

ԼՈՂԱՐԾԱԻ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԵՂՈՑ ԽՈՒՄԸ 4X100 ՄԵԹՐԻ ԱՇԽԱՐՀԻ ՆՈՐ ՄՐՑԱՆԻՉ ՐԱՍՏԱՏԵՑ

Ճափոնի Եռքոհամա քաղաքին մէջ տեղի ունեցող լողարշաւի համախաղաղական ախոյեանութեան վեցերորդ եւ վերջին օրուան մրցումներուն, Միացեալ Նահանգներ ոչ միայն շահեցան հինգ յաւելեալ ոսկի մետալներ, այլեւ յաջողեցան աշխարհի նոր մրցանիշ մը հաստատել տղոց 4x100 մեթր լողի մրցումներուն, որ եղաւ ախոյեանութեան ընթացքին միակ մրցանիշը. Աարոն Փիրսոն, Պրենտըն Հենսըն, Մայքըլ Ֆելիս եւ Ճէյսըն Լեզաք արձանագրեցին 3' 33" 48 արդիւնք մը:



Տղոց 4x100 մեթր լողարշաւի նոր մրցանիշ հաստատած Միացեալ Նահանգներու խումբը

Վերջին օրուան մրցումներուն, աւստրալիացի Իան Թորփ իր խմբակիցներուն հետ շահեցաւ արծաթ մետալը, ախոյեանութիւնը աւարտելով հինգ ոսկի եւ մէկ արծաթ մետալներով:

Ընդհանուր դասարան մէջ Միացեալ Նահանգներ 21 ոսկի մետալով հանդիսացան առաջին, իսկ Աւստրալիա 11 ոսկի մետալով՝ երկրորդ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

- ԱՂՁԻԿՆԵՐ**
- 100 ՄԵԹՐ
- ԱՉԱՍ ԼՈՂ
- 1.- Նաթալի Քուկլին (Մ. Ն.) 53" 99
- 2.- Ճոնի Հանքի (Աւստրալիա) 54" 55
- 3.- Ճենի Թոմսըն (Մ. Ն.) 54" 75

- 200 ՄԵԹՐ**
- ԿՈՆՆԱԿԻ ԼՈՂ
- 1.- Մարկուս Զոնի-գըր (Մ. Ն.) 2' 11" 00
- 2.- Այա Թերաքաուա (Ճափոն) 2' 12" 28
- 3.- Ճենիֆըր Ֆրարքի (Ֆրանսա) 2' 12" 71

BALKAN Holidays
VARNA
295 \$
Կը Երբիակէ՛ր Երթողարձի տուն + պանդոկ + փոխադրութիւն
ՎՃԱՐՄԱՆ ԴԻՐՈՒԹԻՒՆ
Մարա, ՈւարըՖ Ռոմ շէնք, «Պանը Աւտի»
01-304553/63 03-273251



- Կրէնք Հէլըք
- Ն.) 52" 45
- 2.- Ճեֆ Հիլեմիլ (Քանադա) 52" 48
- 3.- Թարալի Եամամոր (Ճափոն) 52" 69

Ստորեւ՝ մետալներուն վերջնական դասարանը.

	Ոսկի	Արծաթ	Պրոնզ
1.- Մ. Ն.	21	16	15
2.- Աւստրալիա	11	14	3
3.- Ճափոն	2	4	8
4.- Զանատա	0	0	7
5.- Չինաստան	0	0	1

ՍԱԼԻՎԸՆ ՎԻՐԱԽՈՐ

Թոթենհեմի եւ Սկոտլոյ ֆուտբոլի ազգային խումբին բերդապահ՝ Նիլ Սալիվըն, որ իր բուժմամտը վիրաւորեց, շուրջ երեք ամիս պիտի բացակայի ֆուտբոլի կանաչ դաշտերէն, յայտնեցին անոր խումբին պատասխանատուները:

Թոթենհեմի մարզիչ՝ Կլէյ Էտտըլ խումբին կատարած փորձերէն ետք յայտարարեց, թէ սկոտլոյցին առնուազն երկու ամիս պիտի բացակայի, իսկ եթէ անոր բուժմամտը վիրաւորութեան մը կարիքը ունենայ, բացակայութիւնը շատ աւելի երկար պիտի տեւէ:

Խումբին համացանցի կայքին մէջ Հատըլ ըսաւ. «Բերդապահ մը վիրաւորուիլը բաւական մտահոգիչ է. այդ պատճառով ալ խումբին ներկայի փափաքն է ամէնէն կարճ ժամանակաշրջանին Սալիվընի ապաքինած տեսնել: Սալիվըն, որ բերդապահներու մարզիչ Հանզի Սեկըզի հետ փորձի ժամանակ իր բուժմամտը կորսեց, հարկ ըլլալու պարագային պիտի ենթարկուի վիրաւորութեան: Անշուշտ այդ մէկը կը յստականայ յառաջիկայ շարք, մինչ այդ յոյս ունիմ, որ Սալիվըն շուտով կ'ապաքինի եւ մտ իր կողմէն ամիսներ կ'ընդունայ»:

Նշենք, թէ Սալիվըն վերջերս հիմնական բերդապահ իր պաշտօնը զիջած էր իր խմբակից՝ ամերիկացի Քէյսի Քելլըրին: Աւելի ուշ, Թոթենհեմի հիմնական կազմէն հեռացուելուն պատճառով, ան Սկոտլոյ ազգային խումբին մէջ ալ իր պաշտօնը կորսնցուցած էր:

Կը սպասուի, որ յառաջիկայ քանի մը ամիսներուն բերդապահ Լարս Հըրստը փոխարինէ Սալիվընը իրրեւ Թոթենհեմի պահեստի բերդապահ:

«ՉԵՄՓԻԸՆՉ ԼԻԿ»Ի ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐՈՒԵՑԱԻ

Երէկ, Մոնաքոյի մէջ տեղի ունեցաւ 2002-2003 եղանակի «ՉԵՄՓԻԸՆՉ ԼԻԿ»ի Ա. Հանգրուանի մրցումներուն վիճակագրութիւնը. ուժ խմբակ, իւրաքանչիւրը՝ չորս խումբ: Մրցաշարքը կը սկսի Սեպտեմբեր 17ին:

Անգլիա, Սպանիա եւ Իտալիա ունին չորսական խումբ՝ մրցաշարքին մասնակցող, մինչ Գերմանիա եւ Ֆրանսա՝ երեքական խումբ:

Ամէնէն աւելի զօրաւոր խմբակն է՝ Ի. խմբակը, որուն մաս կը կազմեն Պայէրն Միւնխէն, Տեփորթիւօ Բորուսա, Ա. Մէ. Միլան եւ Լանս:

- Ստորեւ՝ Լ. խմբակներուն վիճակագրութիւնը.
- **Ա. ԽՄԲԱԿ**
- Արսենալ (Անգլիա)
- Պորուսիա Տորթուս (Գերմանիա)
- Փ. Ս. Վ. Այնտուվըն (Հոլանտա)
- Օքսֆորդ (Ֆրանսա)

- **Բ. ԽՄԲԱԿ**
- Վալենսիա (Սպանիա)
- Լիվըրպոլ (Անգլիա)
- Սպարտակ Մուկուս (Ռուսիա)
- Պարս (Չեխիոյ)

- **Գ. ԽՄԲԱԿ**
- Ռեալ Մատրիտ (Սպանիա)
- Ա. Էս. Բումա (Իտալիա)
- ԱԷՔ Աթէնք (Յունաստան)
- Կէնք (Պելճիքա)

- **Դ. ԽՄԲԱԿ**
- Ինթեր Միլան (Իտալիա)
- Լիոն (Ֆրանսա)
- Այաքս Ամսթերտամ (Հոլանտա)
- Ռոպէնպորկ (Նորվեգիա)

- **Ե. ԽՄԲԱԿ**
- Եուրկենթուս (Իտալիա)
- Ֆեյենորտ Ռոթերտամ (Հոլանտա)
- Տիւսնո Բիել (Ուքրաինա)
- Նիքիթալ (Անգլիա)

- **Զ. ԽՄԲԱԿ**
- Մանչեսթըր Եունայթըտ (Անգլիա)
- Պայեր Լեւերքուզըն (Գերմանիա)
- Օլիմպիա (Յունաստան)
- Մաքսիմալ Կայֆա (Իսրայէլ)

- **Է. ԽՄԲԱԿ**
- Պայերն Միւնխի (Գերմանիա)
- Տեփորթիւօ Բորուսա (Սպանիա)
- Ա. Մէ. Միլան (Իտալիա)
- Լանս (Ֆրանսա)

ԵՌՆ. Է. ԷՖ. Ա.Ի ԶՏՈՒՄԻ ՄՐՑԱՇԱՐՔ

ԶՈՒԱՐԹՆՈՑ ԵՐԵՒԱՆ ԶԱՂԹԵՑ, ԲԱՅՅ ԴՈՒՐՍ ՄՆԱՅ ՄՐՑԱՇԱՐՔԸՆ

ԵՌ. Է. ԷՖ. Ա.Ի Ա. հանգրուանի պտուկի դարձի մրցումներուն, երէկ, Չուարթնոց Երեւան թեւ 2-0 արդիւնքով յաղթեց, բայց դուրս մնաց մրցաշարքին, որովհետեւ երթին 6-1 արդիւնքով ժանր պարտութիւն մը կրած էր Փրիմորէէն (Սլովենիա):

Երէկուան մրցումին հայրենի կազմին երկու կոլերը նշանակեցին՝ Սարգիս Նապարեան (53րդ՝ փենալթիով) եւ Միքէլ Յովհաննէսեան (78րդ):

ԱՇՏԵԱՆ ԹՈՒՐԶ - ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

- **14-21 Սեպտեմբեր.** բացառիկ շրջապտոյտ. CALYPSO Գառն, գեղունիքի զետրուիք, այցելութիւն յունական վեց կղզիներ եւ Աթէնք, ամէն օր խրախմբ. գին փոխան 470\$ 395\$-ն սկսեալ:
- **7-11 Սեպտեմբեր.** Կիպրոս, զինի փառատունց առիթով, լման պտոյտներով, գին՝ 275\$ եւ 370\$:
- **4-11 Նոյեմբեր.** Հայաստանի ոսկի Աշուն՝ բացառիկ շրջապտոյտ Երեւան, լման պտոյտներով Ա. կարգի պանդոկ, գին՝ 585\$:
- **ԱՇՏԵԱՆ ԹՈՒՐԶ - 01-261177, 01-240654, 03-233978:**

IGOL MOTOR OIL
FUEL CARD

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԶԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

